

19(622)

19.07.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարով

ԼՈՒՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՐԵՆ ՈՏԷԻ ԿԱՆԳԵՆԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Առանց հարցախույզների անցկացնելու կարելի է վստահաբար ասել, որ հանրության մոտ այսօր հավատի մեծ դեֆիցիտ կա: Մարդիկ չեն հավատում վաղվա օրվան, խորապես կասկածում են խաղաղության խոստումներին, չեն վստահում արդարադատությանը... Իսկ չհավատալու գլխավոր պատճառը հետպատերազմյան հոգեճնշվածությունն է, որ խարանված է ամեն մի արցախցու (և ինչու միայն) մտահոգ դեմքին:

Նկատենք, դրան նպաստում է նաև համացանցը, որն այսօր ողողված է աղբբեջանական քարոզչամեթոդային կեղտոտ սադրանքներով: Եվ ցավալին այն է, որ հայ հասարակությունը ջանադրաբար կարողում է դրանք, քննարկում, եզրակացություններ անում ու մատուցում դիմացինին: Չարմանալ կարելի է, որ, սաենք, Facebook սոցիալական ցանցում աղբբեջանական ծագմամբ կայքերի հրապարակումներին հավանություն են տալիս մեծամասամբ հայ օգտատերերը: Աղբբեջանցի օգտատերերին դա պետք չէ, որովհետև քաջ գիտեն, որ այդ ամենն ուղղված է հայկական լսարանին, և մենք էլ միանորդ ենք կլանում ենք ամեն ապատեղեկատվություն ու ծանր հետևություններ անում: Աղբբեջանի ուժգործը հենց դա է՝ խուճապ առաջացնել արցախահայության մոտ, որպեսզի նրանք ապագայի հանդեպ տագնապով լցված՝ աստիճանաբար լքեն իրենց պատմական հայրենիքը:

Երբ ասում ենք պատերազմը դեռ չի վերջացել, չի նշանակում, թե ուր որ է, կսկսեն կրակել հրանոթները: Բոլոր չլուծված հակամարտությունների «խաղաղ փուլը» տեղեկատվական-քարոզչական պատերազմն է, որը նաև կամխորհուրդում է հակամարտության հետագա ընթացքը: Այո, մենք որոշ ծախսեր ենք ունենցել անցյալ տարվա աշնանը տեղի ունեցած ռազմական անմասխաղեպ տեսլագի ընթացքում, բայց դա չի կարելի անվանել պարտություն: Առհասարակ, «պարտություն» և «կապիտուլյացիա» բառերը պիտի հանել մեր բառապաշարից, որովհետև դրանք հոգեբանական ազդեցության ծանր գործիքներ են: Հիշենք, 1994-ին մենք ծնկի էինք բերել Աղբբեջանին, բայց նրանք իրենց պարտված չեն համարել, հակառակը, ձգտել են հզորանալ ու ռեվանշի հասնել:

Մենք այսօր դարձյալ ունենք պետական անհրաժեշտ ինստիտուտներ, որոնք նորմալ գործում են: Իսկ ԱՀ պաշտպանության բանակի պահպանման համընդունուժ մեր անվտանգության կարևորագույն երաշխիքն է: Պատկերացնել կարելի է, թե ինչ ապրումներ ունի այս պահին դարաբաղա-աղբբեջանական սահմանին կանգնած ազգերի զինվորը, ում մոտը դեռ շարունակվում է ցավելի ազատամարտիկի բազկի հարվածից: Համարյա ամեն օր տեսնում ենք, թե ինչպես են աղբբեջանական ավտոմեքենաների շարասյունները ռուս խաղաղարների ուղեկցությամբ անցնում Արցախի տարածքով: ԹՈՒԻՐՔԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՒ ՄԵԶԱՆԻՑ, իսկ մենք տագնապում ենք, երբ Շուշիից հանկարծ մի ազգերի «համաշրի» վախից օդ է կրակում: Կարելի է նաև պատկերացնել, թե ինչ ապրումներ կունենան նրանք, եթե Արցախի պաշտպանության բանակի զինվորն սկսի կրակել: Դրա ժամանակն, անշուշտ, կգա, իսկ հիմա դեռ ոգեշնչման ու գոտեպնդման ժամանակն է, արժանապատվորեն ոտքի կանգնելու ժամանակը:

Չտրվել սադրանքներին, չհուսահատվել ու հավատալ վաղվան. սա՛ է գերխնդիրը: Հատկապես մանկավարժներն այս գործում հսկայածավալ անելիք ունեն, որովհետև շատ կարևոր է, թե հայրենասիրության ինչ դասեր է առնում մատուց սերունդը: Այդ սերնդի գաղափարական տրամադրվածությամբ է չափվում նաև ավագների վճռակա-նությունը՝ ապրել և արարել Արցախում, թե՛ ոչ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

«ԼՈՒՅՍԻ ԱՌԱՔՅԱԼ»-Ի ԱՌԱՋԻՆ ՄԵՂԱԿԻՐԸ



ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ստեղծել է գերատեսչական մեղալ՝ «Լույսի առաքյալ», որին, ինչպես վստահեցնում է նախարար Լուսինե Դարախանյանը, կարժամանան նրանք, ովքեր ունեն ծանրակշիռ ներդրում կրթության համակարգում: «Լույսի առաքյալ» մեղալով առաջինը պարզատրվելու պատվին արժանացավ Սոս Արզումանյանը: Ուրախալի, միևնույն ժամանակ հուզիչ արարողություն էր նախարարությունում, քանզի աշխատակազմը «ցտեսություն» էր ասում կրթության համակարգի ազդեցիկ դեմքերից մեկին:

Սոս Արզումանյան՝ ինձ համար նշանակում է կյանքի դպրոց: Նախարարությունում իմ աշխատանքային մկրտությունն անցել է Արզումանյանի դպրոցի միջով: Մոտ երկու տարի, որպես գլխավոր մասնագետ, աշխատել եմ նրա ամբիջական ղեկավարությամբ և հասկացել, որ սկզբունքին չի կարելի դավաճանել, որ կա համակարգ, կա մեխանիզմ, և կրթության ոլորտում հաջողությունների ենք հասնում, եթե պահում ենք այն սկզբունքը, ինչը նա դրել է: Գիշտ ապրած գեղեցիկ կյանք, ճիշտ սկզբունքներ արմատավորած մեր համակարգում և չափանմուշային, բացարձակ հեղինակություն վայելող մարդ, որի մասին խորը հարգանքով են խոսում, որովհետև մարդն իրավամբ վաստակել է այդ հարգանքը, սաաց Լ. Դարախանյանը:

Կրթության նախապետի հասցեին ջերմ խոսքեր ասացին գործընկերները: Դրանք հավուր պատշաճի ասված խոսքեր չէին, այլ ղեկավարի, խորհրդատուի, գործընկերոջ հետ ճանապարհ անցածների անկեղծ զգացմունքներ:

«Դուք Ձեր կյանքի այս նշանավոր հանգրվանին հասել եք ստեղծագործական առատ հունձքով՝ անցնելով մտավորականի և մարդու ազնիվ ճանապարհ: Դուք միշտ եղել եք բարու կողմնակից, ճշմարտության ճանապարհորդ: Մենք շատ բան ենք սովորել ձեզից և էլի ունենք սովորելու»: Նախադրոցական բաժնի վարիչ Էլմիրա Հովհաննիսյան:

«Մեծ ծառը հեռվից է երևում. սա ասված է Ձեզ պես անձնավորությունների մասին: Կինդրեհիմք Ձեր առաքելությունը շարունակել՝ անկախ Ձեր կարգավիճակից»: Հաղորդի շրջանի ԿՍ բաժնի վարիչ Արթուր Մի-նասյան:

«Ընկեր Արզումանյանը մեծ ազդեցություն է թողել տեսուչների և ընդհանրապես կրթական համակարգի վրա: Իրեն ղրակողը է որպես արդարացի, խստապահանջ տեսչապետ: Ստուգվողներն ընդունում էին իրենց թերությունները և սիրով աշխատում նրա հետ»: Բեյբուտ Մելքոնյան, տեսուչ:

Սոս Արզումանյանը հուզմունքով ընդունեց օրվա հերոսի իր կարգավիճակը: Նա ունի վաստակավոր մանկավարժի կոչում և բազում այլ պարգևներ, բայց մի այլ ուրախությամբ ընդունեց «Լույսի առաքյալ» մեղալը: Վաստակած հանգստի անցնող մարդու խոսքը, որ իր անցած ճանապարհի մա-

սին բարձրաձայն մտորում էր, հիշողություն էր և հանրային դաս: «Լուսարար»-ը արժանի համարեց նույնությամբ ներկայացնել նրա խոսքը:

Շատերն ինձ հարցնում են՝ ո՞րն է քո հաջողությունների գրավականը: Ես միայն մի բանում եմ տեսնում. ցանկացած պաշտոնում, որտեղ էլ որ աշխատել եմ, երբեք չեմ մտածել, որ պիտի ինձ զովեմ, պարզապես եմ գեղեցիկ խոսքեր ասեմ: Ես պատասխանատու եմ եղել միայն ու միայն իմ խղճի առաջ: Այն դաստիարակությունը, որ իմ ուսուցիչները, այդ թվում և հայրս, սերմանել են իմ մեջ աշակերտական նստարանից, օգնել են կյանքում ինձ դուռերել այնպես, որ լավ հետագիծ թողնեմ:

Ես իմ ուրախությունը գտել եմ աշխատանքի մեջ բոլոր կոլեկտիվներում, որտեղ աշխատել եմ: Գլուխս բարձր ուզում եմ քվարկել այն մարդկանց անունները, որոնց մի մասը, ցավոք, ողջ չէ: Նրանք եղել են մեր համակարգի հսկաները:

Ես այնպիսի մեծերի հետ եմ աշխատել, ինչպիսին Սարգիս Արամյանն է, որը 18 տարի ղեկավարել է Լեռնային Ղարաբաղի կրթության համակարգը: Աշխատել եմ այնպիսի լուսավոր մարդու հետ, ինչպիսին Վիգեն Հայրապետյանն է, որը մեր նախարարներից մեկն է եղել: Յոթ տարի աշխատել եմ արհմիություններում, որի ղեկավարը Սերգեյ Դավթյանն էր: Նա մի հուժկու անձնավորություն էր, որին տարբեր մարդիկ տարբեր գնահատականներ կարող են տալ, բայց նա եղել է անհատականություն: Վարչական իմ աշխատանքային մկրտությունը սկսել եմ որպես դպրոցական տեսուչ քաղաքովորի կրթության բաժնում, և առաջին իմ ղեկավարը եղել է հետագայում մեր առաջին նախարարը՝ Հենրիխ Գրիգորյանը: Շատ ափսոս, որ նա մեկ տարի ղեկավարեց համակարգը և հրաժեշտ տվեց կյանքին:

Ես աշխատել եմ Հենրիխ Գրիգորյանից մինչև Լուսինե Դարախանյան տասը նախարարի հետ: Հենրիխ Գրիգորյան, Համլետ Ասրյան, Համլետ Գրիգորյան, Արմեն Սարգսյան, Կամո Աթայան, Աշոտ Դուլյան, Վլադիկ Խաչատրյան, Սլավիկ Ասրյան, Նարինե Աղաբալյան, Լուսինե Դարախանյան: Ինձ մեկ-մեկ հարց են տվել լրագրողները՝ ո՞ր նախարարն է քեզ համար եղել ամենից լավը: Ասել եմ՝ բոլորը: Բոլոր նախարարների մեջ ես տեսել եմ ուժեղ և թույլ կողմեր: Բոլորից շատ բան եմ սովորել: Ինչ-որ բան էլ իրենք են ինձ մից սովորել: Քաջցնելու չէ, որովհետև դա այդպես է, կյանքը միշտ սովորեցնում է, և ովքեր դադարում են սովորել, այդ օրվանից դադարում են լինել: Ես պարտական եմ իմ բոլոր գործընկերներին, որոնց հետ աշխատել եմ տարբեր օղակներում: Ինչքան կոշտ եմ եղել (բնավորության գիծ է, կոշտ եմ դրսից), ներսից միշտ բարի եմ, որովհետև հենց այդ պահին մոռանում էի, որ որևէ մեկին դիտողություն եմ արել: Հանդիպումների ժամանակ հենց այդ խստության համար եմ ինձ շնորհակալություն հայտնում, ոչ թե «բարության»: Դրա համար ես սիրել եմ բոլոր աշխատողներին: Նրանք տասը չեն, հարյուրը չեն, շատ են: Ես սիրել եմ բոլոր դպրոցների ղեկավարներին, չնայած նրանցից ոմանք իմ գրած եզրակացության համար պաշտոնից ազատվել են: Մինչև հիմա երբ մենք հանդիպում ենք, իրար ջերմ խոսքեր ենք ասում, որովհետև այդ ամենը կատարվել է հանուն մեր առջև նստած երեխաների ապագայի: Նրանց կրթության և դաստիարակության գործը մեծ վեր ենք դասել ամեն ինչից:

Բոլորի հետ չփվելով, աշխատելով՝ բազմաթիվ հաջողություններ եմ ունեցել: Անշուշտ, եղել եմ նաև թերություններ, անհաջողություններ, որոնք ընթացքում շտկվել են: Նախարարությունը մեր համակարգի վեր-նախալն է, այստեղ աշխատողները պետք է որակական բարձր հատկանիշներ ունենան, և մեծ մասն ունեցել է: Դա պարտադիր պայ-

ման է: Մեր տեսուչներին միշտ ասել եմ՝ այնպես մտեք դպրոց և դուրս եկեք, որ ձեր գնալուց հետո ձեր մասին չասեն՝ տեսուչը եկավ-գնաց, մենք բան չհասկացանք: Եվ գործընկերներս հասկացել են, շնորհակալություն բոլորին:

Եվ վերջապես մեր բոլոր ուսուցիչներին եմ ուզում շնորհակալություն հայտնել, որոնք գլուխները կախ՝ աշխատում են երեխաների հետ: Լինելով համակարգի մի մասնիկ՝ ես արել եմ այն ամենը, որ վաղը-մյուս օրը չանաչեմ մեր ուսուցիչներին, իմ գործընկերներին առաջ:

Կրթության պետ, տեսչության պետ, բաժնի վարիչ, բոլոր օղակներով անցել եմ՝ հասել տեսչության պետի պաշտոնին: Դեկավարությունը, գնահատելով իմ աշխատանքը, 4 տարի առաջ ինձ տեղափոխել է նախարարի խորհրդակցի պաշտոնին: Դա էլ եմ համարում իմ նկատմամբ մեծ գնահատանք: Ընդհանուր իմ աշխատանքային գործունեությունը կես դար է: Այդ 50 տարվա կեսից ավելին եմ աշխատել եմ այս նախարարությունում: Եվ սովորել եմ, և՛ սովորեցրել իմ ենթակայներին, համակարգի աշխատողներին: Հիմա էլ պատրաստակամ եմ: Ինձ այստեղ դեռ ջանք են համարում: Համենայն դեպս, 70 տարիս երբ բոլորել է, ինձ զգացել եմ ոչ 25, ոչ 50, ոչ էլ 60 տարեկան: Բայց փորձելու եմ բոլոր հանդիպումների ժամանակ, բոլոր հեռախոսազանգերով, ինչը մինչև հիմա շարունակվում է, օգտակար լինել մեր ուսուցիչներին, տնօրեններին, փոխտնօրեններին, մեր նախարարությանը, գործող նախարարին: Ես միշտ ասել եմ՝ երբ որ ինձ ասեն՝ գնա տուն, հանգիստ գնալու եմ: Վերջիվերջո նոր մարդիկ պիտի գան, երիտասարդներ, սերնդափոխություն պիտի լինի: Ես երբ եկել եմ նախարարություն, մեծ համբավ ունեցող մարդիկ էին աշխատում. ինչքան՝ հույսակապ տեսուչներ ենք ունեցել՝ որակավորման ինստիտուտի ողջ կազմը: Ես ամենից ջանք եմ եղել: Հիմա դարձել եմ ամենատարիքովը, դրա համար ձեզ ասում եմ՝ սիրելիներս, ես լքում եմ ձեզ, հեռանում եմ, բայց լինելու եմ ձեզ հետ:

«Լույսի առաքյալ» մեղալը լավ մտահղացում է: Այն մեր ընդհանրական գնահատականն է, որպեսզի մեր կրթական համակարգը կարողանա դիմակայել մարտահրավերներին, որ մեր դաստիարակած երեխան վաղը-մյուս օրը թշնամու առաջ չփախչի: Եվ այդպես էլ արել է: Մեր զինվորը կատարել է իր պարտքը: Ցավոք, այլ կերպ է ստացվել:

Մարդիկ կարող են կյանքում սխալվել, այդ թվում՝ պետությունների ղեկավարները, բայց սխալները պիտի ուղղել: Ես վստահ եմ, որ անպայման կուղղվեն:

Եվ այսօր ուրախ եմ այն բանի համար, որ մեր Արցախը այդպես արհավիրքներից հետո շարունակում է արարել, պայքարել: Չպետք է ընկճվել. արդարությունը պետք է հաղթանակի ի վերջո. մենք դրան սպասում ենք: Մենք տվել ենք հազարավոր զոհեր, ես խոնարհվում եմ բոլորի հիշատակի առաջ. նրանք մեզ պարգևել են այս օրը, վաղվա օրը: Կոչ է, որ մեր ժողովուրդը մեկ միասնական բռնցք կազմի: Դիմացել ենք, դիմանում ենք և շարունակենք վերքերը բուժելով՝ նորից հաղթանակներ ունենալ: «Լույսի առաքյալ» հ. 1 մեղալը, որ ինձ պարգևեցիք, շատ խորհրդանշական է: Ուզում եմ, որ այն տրվի միայն ու միայն արժանավորներին: Եվ համոզված եմ, որ հենց այդպես էլ կլինի: Ես այս մեղալը ընդունում եմ մեծ սիրով:

Աշխատաստված եմ լքում, բայց ոչ ձեզ: Ես չեմ պատրաստվում լքել հայրենիքը. ծնվել եմ Դարաբաղում, ապրում եմ Դարաբաղում, ապրելու եմ Դարաբաղում, և տեսնելու ենք մեր Դարաբաղը ազատագրված:

Փառք ու պատիվ մեզ բոլորիս, մեր զինվորին, մեր բանակին, մեր ժողովրդին: Թող մեր ժողովուրդն արժանի լինի իր արժանիքներին, որ կերտել է դարերի ընթացքում:

ՈՒՋԱՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՆԳՍԱՆՈՒՄ, ՄԱՐԶՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԱԳՎԱ ԴԱՇՏԴԱՆՆԵՐԸ

Հուլիսի 7-ին տեղի ունեցավ ԱՀ ԿԳՄՍ և պաշտպանության նախարարությունների համատեղ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի բացումը: Արդեն 12 տարի է, ինչ գործում է նախագորակոչային պատանիների համար նախատեսված այս ճամբարը: Նպատակը պատանիների նախագորակոչային պատրաստության իրականացումն է, որը ներառում է ռազմահայրենասիրական դաստիարակության, գինվորական ծառայության նախապատրաստման, ֆիզիկական առողջության ամրապնդման, մշակութային և մարզական հետաքրքիր միջոցառումներ, առօրյա հանգստի աշխատանքներ:



ճամբարի կազմակերպչական աշխատանքներն անմիջականորեն դրված են ԿԳՄՍՆ ՆԶՊ և արտադրողական ծրագրերի վարչության վրա: Ինչպես տեղեկացրեց բաժնի պետ Արմեն Պետրոսյանը, ճամբարը մեկնարկել է հուլիսի 5-ին և երեք հերթափոխով տևելու է մինչև հուլիսի 31-ը: Առաջին հերթափոխում ընդգրկվել են Ստեփանակերտի և Շուշիի Խ.Աբովյանի անվան դպրոցների 10-րդ դասարաններն ավարտած, «Եզնիկ Մոզան» ուսումնարանի տղաները: Երկրորդ և երրորդ հերթափոխներում կմասնակցեն Մարտակերտի, Մարտունու, Հաղուրթի շրջանների պատանիները:

ճամբարի պետ, Ստեփանակերտի հ. 9 դպրոցի զինղեկ՝ մայր Արսեն Հարությունյանն ասաց, որ ճամբարի օրվա կարգացուցակը՝ առավոտյան տողանից մինչև երեկոյան անվանական, մոտեցված է գինվորական ծառայության նորմերին: Պլանավորված են նաև



սիրելի ու նրան մվիվելու է: Հանդգված են, որ այդ սերը ձեր մեջ կա, և ճամբարի ընթացքում դուք ավելի եք սիրելու մեր երկիրը, ավելի միասնական եք դառնալու, բռունցքվելու եք, դառնալու եք Հայոց բանակի հեծարանը»,- իր ողջույնի խոսքում ասաց նախարարը:

ճամբարի աշխատանքներում ընդգրկված են ուժային կառույցների ներկայացուցիչներ, որոնք իրենց գծով աշխատանքներ են տանում պատանիների հետ, նրանց ծանոթացնում տվյալ ուժային կառույցի առանձնահատկություններին և այսօրվա իրավիճակին համահունչ ուղղություն և խորհուրդներ տալիս:

ճամբարականները տուն են վերադառնում հարուստ «ավարով»՝ ռազմամարզական մրցումներում և մշակութային միջոցառումներում ակտիվ մասնակցություն ունենալով:

ընկերությունը շարունակվում է բանակում, մարտի դաշտում. ընկերը ընկերոջը չի թողնում ոչ մի դեպքում: «Ասպետ-2021»-ին բարի երթ մաղթեց Աֆղանստանի պատերազմի վետերանների միության ՀԿ վարչության անդամ Շիրակ Զաքարյանը: «Ասպետ»-ին մասնակցելը անարդյունք չի անցնի: Երկու-երեք տարի հետո այս պատանիները կհամալրեն ՊԲ շարքերը՝ հոգեպես, ֆիզիկապես և գինվորական կյանքին նախապատրաստված. մեզ հետ զրույցում այս համոզմունքը հայտնեցին ճամբարականները: «Երբ 2-2,5 տարի հետո զորակոչվեմ բանակ, ինձ համար հեշտ կլինի ծառայելը. այստեղ վարժվում եմ բանակային կյանքին, սովորեցնում են դառնալ քաջ գինվորներ»,- ասում է Դավիթ Գոտանյանը: Իսկ Վազգեն Մկրտչյանը, որը միշտ հանգստացել է ցերեկային ճամբարներում, ասաց, որ «Ասպետ»-ի առավելությունն այն է, որ սովորեցնում է ընտելանալ տարբեր պայմանների: Վստահ է, որ հաղթանակներ դեռ կունենանք. «Պետք է ազգովի մեկ մարդ դառնանք, ֆիզիկապես, ոգով ու մտքով ուժեղ լինենք»:

Թե մի քանի օրվա ընթացքում ինչ հմտություններ են ձեռք բերել պատանիները, ներկայանալով համոզվեցին արտադրողական ծրագրերի բաժնի պետ Արմեն Պետրոսյանի ղեկավարությամբ ճամբարականների՝ ձեռնամարտի ցուցադրական ելույթներից, որն ավարտվեց «Մերն է Հաղուրթը, Շուշին, թուրք, սպա-սիր ռևանջի» գոչումով: «Ասպետ»-ին համերգային ծրագրով այցելել էին Ստեփանակերտի մշակույթի տան սաները՝ սոնորեն Ռաֆայել Ավանեսյանի գլխավորությամբ: ճամբարի հանդիսավոր բացումը եզրափակվեց միասնական շուրջապարով:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀՈՂԻ ՏԵՐԸ ՆՐԱ ԿՐԱ ԱՊՐՈՂ ՈՒ ԱՐԱՐՈՂ ԺՈՂՈՎՈՒՐՆ Է

Կանոնները Ս.գ.դ., պրոֆ.

Արդեն որբերող անգամ Աղբեջանի բռնապետն ի լուր ամենի հայտարարում է, թե Ջանգեզուրը, Սևանը, Երևանը իրենց պատանական հայրենիքն է, ու անպայման հասնելու են դրան... Համամիտ չեն այն մարդկանց հետ, ովքեր պնդում են, որ մնան բաներին ուշադրություն չպետք է դարձնել: Ավելին, կարծում են, որ ոչ միայն դրան բոլոր խողովակներով ժամանակին պատասխան պետք է տրվի, այլև հնարավորինս շուտ սեփական բանակը պետք է մարտունակ դարձնել և իմանալ, որ միայն ուժերի մոտավոր հավասարության պարագայում կդադարեն մնան ցինիկ խոսակցությունները: Իսկ այսօր մեր ռազմաքաղաքական ղեկավարության, մեղմ ասած՝ ասպիկարության, անգրագիտության, անգործության շնորհիվ մենք ունենք բարոյափոխության անհրաժեշտ առումով կոտրված, ընկճված բանակ, որի մարտունակության, ոգու մասին պետք է անցյալ ժամանակով խոսել, իսկ սպառազինությունների պահով ու դրանց գիտատեխնոլոգիական բաղադրիչի առումով շատ հետ ենք...

թյունից դեռևս ուշքի չեկած, վերջին շրջանում ավելի քաղաքականացված հայ ժողովուրդը: Բա մի հարց տվող լինի ներսում ասի ու սարսափ, դրսում խեղճ ու կրակ ղեկավարությանը, թե այդ ո՞նց պատահեց, որ կիրթ ու կառուցողական Ալիևը համարյա առանց լուրջ դիմադրության, ստանալով Հաղուրթը, Ավետարանոցն ու Քարին տակը, վերջապես անառիկ Շուշին, հիմա էլ Սյունիքը, Սևանն ու Երևանն է ուզում: Այս հարցը մի պատասխան ունի. հակառակորդը, որը տվյալ դեպքում մեր թշնամին էր և է, գտել է մեր թույլ տեղը, խաբել է իր հետ բանակցողներին ու ձգտում է հնարավորինս շատ ստանալ՝ հերոսանալով իր ցեղակիցների մոտ: Մոտ երեք տասնամյակ այդպես չէր, և պետք է նկատել, որ այդպես չի լինում նաև համաշխարհային պատմության մեջ: Ի դեպ, երբ վերլուծվել են քաղաքակրթության վերջին 5000 տարիները, պարզվել է, որ ընդամենը մոտ 300 տարի մեր մոլորակի վրա պատերազմ չի եղել: Այդ լուրջ, տեղային ու ավելի ընդգրկուն պատերազմների շնորհիվ է, որ երկրի մակերևույթի 510 միլիոն (մեր առած նաև համաշխարհային օվկիանոսը) քառ. կմ տարածքն անընդհատ փոփոխությունների է ենթարկվել դրա վրա ապրող էթնոս-

ների, վարչատարածքային միավորների՝ պետությունների թվի տեսանկյունից, և հիմա էլ ու առմիշտ այդ գործընթացը տարբեր արագություններով ընթանում է: Հայ ժողովրդին ուղղակի անցած դարի վերջերին մի հնարավորություն էր տրված ոչ թե ուրիշից խլելու, այլ ազատագրելու իր պատմական հայրենիքի մի հատվածը և այնտեղ ստեղծելու երկրորդ հայկական պետականությունը՝ Արցախի Հանրապետությունը: Շուրջ երեք տասնամյակ դիմագրավելով բազում դժվարությունների՝ հայ ժողովուրդը իր հզոր՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնությամբ կարողացավ ոչ միայն պահել, պահպանել Արցախը, այլև որոշակի հիմքեր ստեղծել նրա միջազգային ճանաչման համար: Սակայն եկավ չարաբաստիկ պահը, երբ հայ ժողովրդի հավաքական կամքը երեքաց, ու նրա մի մասը գտավ, որ... մենք պետք է հետ տանք այդ հողերն Աղբեջանին: Ի դեպ, լավ են հիշում, որ մանատիպ խոսակցություններ սկսեցին շրջանառվել նաև այդ տարածքների ազատագրման, այդ կրակակետերի լռեցման պահերին: Այս տեսանկյունից երկի եզակի ազգ ենք...

Ինչևէ, մենք ունենանք արյամբ ազատագրված մոտ 43 000 քառ.կմ կենսատարածքով Հայաստան, որից 10 000 քառ. կիլոմետրն անցած պատերազմում՝ կամ պատերազմելով, կամ կապիտուլյացիոն հայտարարությամբ, առանց մի կրակոցի տվեցինք Աղբեջանին... Միզուցեց հայ ժողովրդի մի մասը, հատկապես նոր սերունդը, չգիտի, որ մենք ոչ մեկի տարածք 1992-1994-ին չենք գրավել, պարզապես որպեսզի ԽՍՀՄ-ի (Ադրբեջանի) կազմում ստեղծված ԼՂԻՄ-ը 1991-ից հետո գոյատևեր, Աղբեջանի կողմից մեզ պարտադրված պատերազմում անհրաժեշտաբար պետք է լռեցվեին այդ հայկական կազմավորման շուրջ գտնվող բոլոր այն կրակակետերը, որոնցից փորձում էին գրավել Արցախը՝ հրի ու սրի մատնելով այնտեղ ապրող հայերին: Այդ տարիներին ասպարեզում գտնվող հերոսական սերունդը պատվով կատարեց իր առաքելությունը: Սա է միակ ճշմարտությունը, որը հաճախ նաև մենք ենք մոռանում: Իսկ թուրքը երբևէ մնան խոսակցություն չի բացի ու, ինչպես նաև գիտենք, նա ինքնակամ ոչ մի թիզ հող ոչ մեկին չի զիջի, այնպես որ Ալիևի ասածները միայն տեղական բնույթի օղի շարժում չհամարենք, նրանք արդեն իսկ գիտեն մեր թույլ տեղը ու բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում՝ քարոզչական, հարվածելու են:

Մեզ մնում է ամրանալ մեր ունեցած այս սուրբ հողակտորի վրա ու այն հնարավորինս զարգացնել, այլ ոչ թե մտածել արտագաղթելու ու դրսերում մշտաբար լավ ապագայի մասին: Մենք ազգովի հիմնովին արդեն սխալվել ենք ու որպես հետևանք՝ նաև պարտվել, բայց ամեն ինչ դեռևս կորած չէ, թե մեր ազգային արժանապատվության նշույլներն ուղում ենք պահպանել ու կրկին վերագտնել մեզ, ապա «ոչ» պիտի ասվի ազգակործան, պետականասպան բոլոր գործիչներին, նրանց ընդունած բոլոր որոշումներին: Այլ ճանապարհ, բացի թուրքական տանդեմի դեմ բռունցքվելուց, մենք չունենք: Աղբեջանի և Թուրքիայի համար չի կարող ընդունելի լինել ուժեղ Հայաստանը, նրանց միայն թույլ, գոյությունը դժվարությամբ պահպանող, գոյատևող ու անդամ Հայաստան է պետք, երբ ցանկացած պահի կարող են տիրանալ և՛ Սյունիքին, և՛ Սևանին, և՛ Երևանին: Այո, հողի տեղը նրա վրա ապրող, արարող մարդն է, իսկ հայրենի հողի վրա ապրելու և արարելու համար այն նախ պետք է կարողանալ պաշտպանել թշնամիներից ու հրոսակներից:

Aysor.am

ԱԶԳԱՊԱՆՊԱՆՈՒՄ

ՍՓՅՈՒՌՔԻՆ` ԱԿՏԻՎ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Նորաս Տեր-Գրիգորյանը. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒՆ ԲԱՆԱԿԵԼ...»



Սեր դպրոցներում չեն սովորեցնում ամենազլխավորը՝ թերթ կարդալու արվեստը

Բերտան ՈԱՍՍԵՆ

«Լուսարար»-ի հերթական համարն (հ. 13-14) էի ընթերցում: Մտորումներս թերթերի մասին ավելի հեռուն տարան: Ես այն գնահատել եմ որպես լրատվական այնպիսի դաշտ, որտեղ պետք է արտացոլվեն ամենարդիական և ամենատարբերությամբ հարցեր: Շատ կարևոր է, որ լրագրողը ջանա ճշմարտությունն արտացոլող հրապարակումներ գետեղել հողվածում: Անկասկած, լրագրողի առաջ քաշած ճշմարտությունն ինչ-որ տեղ հարաբերական է և կարող է քննադատվել ընթերցողների կամ այլ լրագրողների կողմից: Արդյունքում համոզվում եմք, որ վեճերի մեջ է ծնվում ճշմարտությունը: Շատ ավելի լավ կլիներ, որ նույն այդ պրիզմայով անցնի ինչպես պետական պաշտոնյաների, այնպես էլ այլ ղեկավար աշխատողների գործունեության պարզաբանումը: Համոզված եմ, այն միայն կօգնի համատեղ ուժերով լուծել ամենատարբեր հարցեր: Եվ միայն այդ պարագայում թերթը կկատարի չորրորդ իշխանության իր առաքելությունը: Զգիտեմ՝ մեր պետական այրերը թերթ կարող են, թե ոչ, բայց ցանկացած դեպքում թերթերը նրանց կօգնեն շատ ու շատ խճճված հարցերից դասեր քաղել, հետևություններ անել: Թերթերը կտան ավելին, քան նրանց շատ խորհրդակցանքեր, որոնք միայն պաշտոններ են զբաղեցնում:

Տարիներ առաջ էր, անձնական գործով ուզում էի մտնել կուլտուրայի քարտուղարի առանձնասենյակ: Քարտուղարուհին կանխեց ինձ. «Այս ժամին քարտուղարը ծանոթանում է օրվա թերթերին»: Որքան էլ զարմանալի թվա, ստիպված էի 1-2 ժամ սպասել: Ավելի զարմանալին այն էր, որ անձնական հարցիս պատասխանելուց հետո մատնացույց արեց շրջանային «Աշխատանք» («Ամարաս» թերթի սկզբնական ամունն է) թերթում տպագրված իմ հոդվածը: «Ճիշտ է, դպրոցները չպետք է օգտագործվեն որպես շերտմի որդը պահելու տեղ, կաշխատենք ձեր գյուղում շերտմատուն կառուցել»:

Թերթի մասին մտորումներս հեռուն տարան իմ բուն նպատակներ: Իսկ բուն նպատակս թերթի վերջը նշված համարի առաջին էջում հրատարակված՝ նախարարի ՌԴ Գրիմի հայկական համայնք կատարած այցի շրջանակներում ինչեցրած հարց ու պատասխանի շուրջ մտորումներն էին: Որպեսզի ստեղծվի ավելի ճիշտ ինչեցրած ստանա, մի բան էլ հիշեմ անցած օրերից: Այն օրերին, երբ Արցախը անկախության համար պայքարի բոցերի մեջ էր, խորհրդային «Կրեմլ-յա» լրատվական գործակալությունը համարյա ամեն օր անդրադառնում էր Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Մոսկվայի փողոցներում տասնյակ մարդկանց տրվում էր միևնույն հարցը. «Ի՞նչ գիտեն Լեռնային Ղարաբաղի մասին»: Ցավով պիտի

արձանագրել, որ նրանք ոչ միայն Ղարաբաղի մասին (չգիտեին անգամ որտեղ է գտնվում) ոչինչ չգիտեին, այլ նաև Հայաստանի մասին շատ սուղ տեղեկություններ ունեին:

Ափյուռքի հետ կապերի ամրապնդումը բխում է մեր կենսական, ինչպես նաև ազգապահպանման շահերից: Բայց դրանք ավելի կենսունակ կլինեն, երբ տեղաբնակիչներն ինչ-որ չափով օժանդակեն գաղթօջախի կայացմանը, նպաստեն նրա ինքնուրույն պահպանմանը, իսկ դրա համար նրանք պետք է իմանան տարածաշրջանում հայերի թողած հետքի մասին: Այդ գաղթօջախները միաժամանակ պետք է դառնան կապող օղակ տեղաբնակների և Հայաստանի, Արցախի ու ընդհանրապես հայ ժողովրդի միջև: Ինձ թվում է, որ քան աշխատավոր հասարակությունը համագործակցի հայկական համայնքների հետ, այնքան նրանք ավելի շատ բան կիմանան հայ ժողովրդի մասին: Ժողովուրդ, որ դարեր շարունակ անուրանալի ներդրում է ունեցել Ռուսաստանի տնտեսական, քաղաքական, ռազմական, մշակույթի ու սպորտի և այլ ոլորտներում: Համոզված եմ, ռուս ժողովուրդն այդ մասին քիչ բան գիտի: Հենց մեր դիվանագիտությունը, հյուպատոսարանները, ԿԳՄՍ նախարարությունները պետք է համապարփակ աշխատանք տանեն՝ ներկայացնելու հայերի դերն այս ժողովրդի պատմության մեջ: Հայերի դերը ռուս ժողովրդի կյանքում ժամանակին բարձր է գնահատել ցար Պետրոս Մեծը. «Հայերին բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել, որտեղ անհրաժեշտ է՝ նրանց մուտքը ավելի խրախուսելու համար»: Հենց նման օժանդակությունից օգտվեցին դրիմահայերը, որոնք Եկատերինա Երկրորդի հատուկ և արտոնյալ հրովարտակով տեղափոխվեցին Ստավրոպոլի, Կրասնոդարի երկրամասեր ու այստեղ հիմնեցին տասնյակ գյուղեր, մշակեցին հազարավոր հեկտարներով տարածքներ, կառուցեցին արդյունաբերական ձեռնարկություններ, և այսօր այդ երկրամասերում տասնյակ հայկական գյուղերի առկայությունը պատահական չէ:

Եթե չեն սխալվում, ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգի դպրոցների պատմության դասագրքում ներառել են թեմաներ Հայոց ցեղասպանության մասին և ուսուցիչներ նախապատրաստել հավուր պատշաճի դասավանդելու համար: Ինձ թվում է, ժամանակն է աշխատանք տանել Ռուսաստանի (զոնե հայաշատ տարածքներում) դպրոցների պատմության դասագրքերում զետեղելու թեմաներ «Հայերը Ռուսաստանում» խորագրով: Դրան հասնելու համար նախ պետք է ձեռքի տակ ունենալ մատչելի կերպով շարադրված, հանրագիտարանային տեղեկացվածությամբ նյութեր հայերի մատուցած ծառայությունների մասին՝ սկսած ամենավաղ շրջաններից մինչև մեր օրերը: Այս ճանապարհին անհրաժեշտ է փորձել համագործակցել կրթության նախարարության, տարբեր հասարակական

կազմակերպությունների, հասարակական գործիչների, գիտության բնագավառի աշխատողների, շահագրգիռ այլ շրջանակների հետ:

Փորձեք մեկ անգամ ևս զուգահեռներ անցկացնել մեր և ազերիների գործելաժողի հետ: Որպեսզի մի բանի հասնեն, նրանք սկսում են դրա համար հող նախապատրաստել՝ դա լինի հիմնված կեղծիքի, ստի, թե այլ հանցավոր նկրտումների վրա: Նրանց համար միևնույն է: Նրանց գիտնականներն ստանում են պատմությունը իրենց օգտին խեղաթյուրելու առաջադրանքներ, գրում աշխատություններ, թարգմանում օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) և արագ տարածում երկրից դուրս: Նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանում պատմաբաններ Ազիզբեկովան, Բուկոբովան այդ ճանապարհով հասան փառքի բարձր աստիճանի:

Նախագահ Ալիևը մեկ անգամ չէ, որ բարձր ատյաններից հայտարարել է, թե Հայաստանի որոշ տարածքներ (Ձանգեզուրը, տարածքներ Գեղարքունիքի, Տավուշի մարզերից, Սևանը, նույնիսկ Երևանը) արդեթեանալ են: Նա դրանով փորձում է լուծել երկու խնդիր. նախ՝ Ադրբեջանը ներկայացնել շատ ավելի հին երկիր, քան Հայաստանը և երկրորդ՝ հավակնել բուն այդ տարածքներին: Հենց այդ նպատակով են նրանց զինված ստորաբաժանումներն օր օրի անարգել ամրանում այդ տարածքներում: Եվ հիմա, հաշվի առնելով, որ իրենց ստոր նպատակներին հասնելու համար նախադրյալներն ստեղծվել են (դա ստորացուցիչ կապիտուլյացիայի համաձայնագիրն է), փորձում են Հայաստանը ներքաշել իրենց ձեռնու մոր համաձայնագրերի, պայմանագրերի մեջ: Այն է՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչում, Ձանգեզուրի միջանցք, մոր սահմանաձգում, սահմանազատում և այլն:

Պետք է հասնել նրան, որ ոչ միայն Ռուսաստանում, այլև այն երկրներում, որտեղ հայերն ունեն ակտիվ և սովոր համայնքներ, եռանդուն կերպով աշխատանք ծավալեն տեղաբնակների հետ, որ վերջինները պահանջեն դադարեցնել ռազմական սպառնալիքները մի ժողովրդի նկատմամբ, որն ամենացողովով կանգնել է իրենց երկրներում ծավալվող ամենատարաբնույթ աշխատանքներին: Տարեց մարդիկ երկի հիշում են, թե ինչպես խորհրդային Միության ժողովուրդը ոտքի ելավ «Ձեռքներդ հեռու՛ Կուբայից», «Ձեռքներդ հեռու՛ Վիետնամից» կոչերով, և արդյունքը եղավ այն, որ այդ երկրները, լինելով թույլ ու հետամնաց, բայց ստանալով ժողովրդի հաստատում (ոչ թղթային) աջակցությունը, նվաճեցին խաղաղ ապրելու իրենց իրավունքը:

Նախարարի այցը Գրիմ և հանդիպումը տեղի ու հարակից շրջանների հայկական համայնքների ներկայացուցիչների հետ, իրավամբ, կարևոր է: Դա Հայաստան-Արցախ-Սփյուռք կապն ամրապնդելու ամենահու-

սալի հարթակներից մեկն է: Մի բանում ևս համոզվեցի. նախարարին մտահոգում է «հայրենիքից դուրս հայրենիք կառուցելու» իրողությունը: Ինձ թվում է, թե այս մտահոգությունը պետք է լինի համահայկական: Սովորաբար շատ անգամ արդարացնում ենք մեր գաղթօջախների առկայությունը՝ կապելով այն պատերազմների, ցեղասպանության, հալածանքների (Արևմտյան Հայաստան) հետ, բայց դրա անընդհատ սովորաբար խաղաղ պայմաններում էլ է կատարվում: Եթե փորձեք բնորոշել մեր՝ հայերիս ամենամոտեղ ու ամենաթույլ կողմերը, ապա սխալված չեմ լինի, եթե պնդեմ, որ հայերիս ուժեղ կողմը հայրենիքը կրթությունն է, պատրաստ կյանքի գնով պաշտպանելու այն (թեկուզ մեր 30-ամյա պատերազմը, չնույնպես պատմության խորքերը), իսկ թույլ կողմը նույն այդ հայրենիքը հեշտությամբ լքելն է («Որտեղ հաց, այնտեղ կաց»): Հեշտ ու լավ կյանքը միշտ էլ հրապուրիչ է եղել հայերի համար:

Կուզեի մեկ հարցի նույնպես անդրադառնալ, որ ինչ-որ չափով կապված է վերը նշածներիս հետ: Հեռուստահաղորդումից իմացա, որ Կուբայի 12-ին Ռուսաստանի Դաշնության օրվա կապակցությամբ մեր հանրապետությունում գտնվող խաղաղապահ ուժերի ներկայացուցիչները կազմակերպել են (ոչ առաջին անգամ) հունանիտար օգնություն Ասկերանի շրջանի որոշ գյուղական համայնքներում՝ մասնավորապես բժշկական, իսկ մի խումբ խաղաղապահներ եղել են Ասկերանի միջնակարգ դպրոցում և հանդիպում են ունեցել աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների հետ:

Բնականաբար, ողջունելի է նման միջոցառումը հատկապես այն առումով, որ երեխաները, չնայած մեծ մասը պատերազմի ժամանակ հեռացել էր Արցախից, բայց և այնպես, գիտեն պատերազմի ողջ ծանրության մասին (անկասկած, նրանց շատ հարազատներ գոհվել են պատերազմում) ու հիմա արդեն, ի դեմս ռուս խաղաղապահների, իրենց պաշտպանված են զգում, և վախի զգացումը օր օրի դուրս է մղվում նրանց հոգեկան աշխարհից: Անհրաժեշտ է ուժեղացնել համագործակցությունը խաղաղապահ ուժերի հետ: Պաշտպանության, ԿԳՄՍ նախարարությունների, դպրոցական կոլեկտիվները երիտասարդական հասարակական կազմակերպությունները պետք է պլանավորեն միջոցառումների ցանկ. լինի դա սպորտային, ինտելեկտուալ, տոն և հիշատակի օրերի կապակցությամբ, արտակարգ իրավիճակներում գործելու (մրցույթ) ձևով և այլ միջոցառումներ: Հիմնական նպատակը պետք է լինի հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, համագործակցության, հայերի՝ Ռուսաստանին մատուցած ծառայությունների մասին իրազեկումը: Պետք է ամել հնարավոր, որ ռուս խաղաղապահներն ինտեգրվեն մեր հասարակական կյանքին:

Լեոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ

ՇԻՎԱՆՍ ԷՐ ԹԵ՛ 1991Թ. ԱՄԱՌԸ, ԹԵ՛ ԱՅՍՕՐՎԱ ԱՄԱՌԸ

2021թ. հունիսին առատ իրադարձությունների ամիս էր: Հունիսի 14-ին Երդողանը քծնաբար հանդիպեց ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հետ՝ նպատակ դնելով նրան համոզել, որ այն, ինչ կատարում է Հարավային Կովկասում և Մերձավոր Արևելքում, իր իրավունքն է, որ ինքը պետք է այդ տարածքներում գերիշխի: Դրանից հետո հաջորդ օրը կրտսեր եղբայր Իլիամի հետ եղավ Շուշիում, որտեղ նույնիսկ համարձակվեց հռչակագրով հանդես գալ: Ցավալի էր դարաբաղիների համար, որ մեր սրբավայր բերդաքաղաքում 2 թուրք համարձակվել են ոտք դնել, էլ չեն ասում, թե որքան վիրավորական է հայ ժողովրդի համար:

Հանդիպում տեղի ունեցավ նաև աշխարհի երկու հսկաների միջև՝ ի դեմս Պուտինի և Ջո Բայդենի, որոնցից կախված է աշխարհի՝ Երկիր մոլորակի բախտը:

Հունիսը եռու էր նաև Հայաստանում: Նախընտրական քարոզարշավները վերջացան հունիսի 20-ին կայացած ընտրություններով: Ընտրություններ, որոնց արդյունքից, ինչպես շատերը, այնպես էլ ինքս շատ դժգոհ մնացի: Վարչապետի պաշտոնակատար կոչվածը, լքելով «Իմ քայլ»-ը, մտավ «Քաղաքացիական պայմանագրի» մեջ և, պողպատե մուրճը թափահարելով, հասավ նրան, որ ստացավ մոլորված ընտրազանգվածի մեծամասնության քվեն և կրկին բազմեց վարչապետի աթոռին ու այս անգամ արարողության ժամանակ դժբախտաբար հոտակայս են դիմավորում՝ մոռանալով, որ 44-օրյա պատերազմում խայտառակ պարտություն է կրել և ծաղկուն Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը Շուշի ամրոցի հետ վայրագ թշնամուն գիջել: Այդքանը դեռ բավական չէ, հրադադարից հետո չի կարողացել պաշտպանել Հայաստանի սահմանները, և մայիսի 12-ին թշնամին ներխուժել է Սյունիքի տարածք ու ամրացել այնտեղ՝ հաշվի չառնելով միջազգային հանրության կարծիքը: Քանի գնում, ավելի է ամրացնում իր դիրքերն այնտեղ, նույնիսկ 6 հոգու էլ գերեզմարել է՝ ավելացնելով հայ գերիների քանակը: Աղբբեջանը գերիներով իր կամքն է թելարում Հայաստանին և ականապատված տարածքների քարտեզների դիմաց նրանց մաս-մաս բաց թողնում: Այնպես որ, ընտրությունների արդյունքով Հայաստանում տիրող ճգնաժամի հարցը չլուծվեց: Դեռ ավելին, նրա ալիքը մոտեցավ Արցախին. ապագայը Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում վերջերս կազմակերպված հանրահավաքի փորձերն էին, որտեղ պահանջվում էր ԱՀ նախագահի հրաժարականը:

Այն իշխանավորները, որոնք ասում են, որ Արցախը բեռ է Հայաստանի համար, մոռանում են, որ Հայաստանի պաշտպանությունը կապված է Արցախի գոյության ու ամուր լինելու հետ: Հանդգնելու համար խորհուրդ կտան դիմել պատմաբան Լեոյին և ռուս մեծ բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու կարծիքներին: Այսպես.

«Առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից: Ղարաբաղն անմիջական շարունակությունն է այն հզոր պաշտպանական պատվարի, որ ներկայացնում է Գուգարքը (այժմ Լոռին՝ հարակից գավառներով): Այս է պատճառը, որ հայկական պետության հիմնադիրներ հանդիսացած Արտաշեսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանի մեջ են մտցրել Ուտին, Արցախն ու Սյունիքը» (Լեո, III հատոր): Իսկ Գորոդեցկին դեռ 1919թ. գրում էր. «Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպես եղել է

անցյալում: Այդպիսին է այժմ և այդպիսին կմնա հավերժորեն, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնարին է պաշտպանել առանց տեղ դառնալու Ղարաբաղին»:

Եվ այսօր անչափ ուրախ եմ, որ «Հայաստան» դաշինքի ղեկավարներից Իշխան Սահաբեյանի շուրթերից լսում եմ, որ Արցախը Հայաստանի համար բեռ չէ, այլ անառիկ ամրոց, որն այսօր մենակ է և մեր օգնության կարիքն ունի: Մենք Ղարաբաղին մենակ չենք թողնի, այլ ամեն ինչով կօգնենք: Չկա Ղարաբաղ՝ չկա Հայաստան»:

Հանդգնված եմ, որ մուրճավոր Փաշինյանից ազատվելով՝ մեր ժողովուրդը պատերազմում կորցածը Շուշիի հետ միասին կվերականգնի:

2021թ. հուլիս ամիսն է, ասել է թե՛ ամառվա երկրորդ ամիսը և իր արևի կիզիչ ճառագայթներով չորացնում է բուսականությունը, որտեղ առանձին տեղերում կանաչ օազիսներ են երևում, որոնց մեջ պարուրված են 44-օրյա պատերազմում զոհված մարտիկների դիակներ: Պատերազմների պատմության ընթացքում նախադեպը չունեցող դեպքերի ենք հանդիպել. ինքներդ ամիսն է, բայց մինչև օրս չենք հայտնաբերել բոլոր տղաների աճյունները. արդեն 1598 աճյուն է հայտնաբերվել, գննվել, փորձաքննության ենթարկվել և հարազատներին հանձնվել: Ձավեշտականն այն է, որ դիակները պարկերի մեջ տրվել է փաշինյանական անպատասխանատու անձանց՝ գնման ու պահպանման: Եվ այսբանի պատասխանատու վարչապետը հրաժարական է տվել ու պաշտոնակատարի իրավունքով ընտրական քարոզարշավ մտել, և, ինչպես վերևում նշեցի, պողպատե մուրճի գործընթացը կրկին բազմել վարչապետի աթոռին:

Անչափ ցավալի է, որ Պուտինը համաձայնվել է, որ թուրքը քիթը խոթի մեր սահմանամերձ շրջան՝ հանձնիս մոնիտորինգ իրականացնող 60 հոգանոց ջոկատի տեղակայման Ադրանում: Չհասկանալով, որ այսօր 60 հոգանոց ջոկատ է մտցնում, վաղն այն բազմաալու է և, օձի պես սողալով, խցկվելու է մեր տարածքը, էլ չեն ասում, որ դրանով նաև ՆԱՏՕ-ն է մոտենալու մեր տարածքին: Ինձ հորդորում են, որ վարչապետի անունը չտամ: Ախր ինչպե՞ս չտամ, երբ նրա դեմքը չտեսնելու պատճառով հեռուստացույցից էլ եմ հեռացել, լուրերը ռադիոյից եմ լսում: Այդ մարդը, իշխանության անցնելով, ամեն տեղ կուրծք ծեծելով ասել է՝ Ղարաբաղցիք ինձ չեն ընտրել, և ես չեմ կարող որևէ փաստաթուղթ ստորագրել նրանց փոխարեն, բայց հակառակը կատարեց. ստորագրեց մի այնպիսի փաստաթուղթ, որով Ղարաբաղի 3/4-ը Շուշիի հետ հանձնեց թուրք-աղբբեջանցուն: Մարդիկ մազապուրծ թողնելով ամեն ինչով լիքը բնակարանները՝ բանալիներն են վերցրել և սրբությամբ պահում են ու կսկիծով հիշում, որ երբեմն այդ բանալիներով բացել և փակել են իրենց բնակարանների դռները:

Ասել է՝ կստորագրի այնպիսի փաստաթուղթ, որ բավարարի և՛ Հայաստանի, և՛ Արցախի, և՛ Աղբբեջանի ժողովուրդների շահերը, որպեսզի 3-ն էլ գոհ լինեն, մինչդեռ ստորագրեց այնպիսի փաստաթուղթ, որ ուրախացրեց միայն Աղբբեջանին: Եվ այսօր էլ կուչ է եկել Աղբբեջանի ասկարների առաջ, որոնք նույնիսկ չեն թույլատրում, որ հայերը իրենց անասուններն արածեցնեն սեփական տարածքում կամ խտրել հնձեն ու հավաքեն: Խեղճ կենդանիները մնացել են կաշկանդված իրենց դատարկ ախոռներում:

Եվ վարչապետի պաշտոնակատար կոչեցյալը, բազմած աթոռին, սպասում է նորընտիր Ազգային ժողովին, որտեղ պիտի կրկին դերասանություն անի ու պահպանի վարչապետ-

տական աթոռը: Սրտատրոփ սպասում եմ և՛ Սահմանադրական դատարանի վճռին, և՛ Ազգային ժողովի առաջին նիստին:

Իմ շատ հարգելի ընթերցող, ինքը շատ լավ ակնառեսն են այս բոլոր իրադարձությունների և ինձնից լավ կարող ես բնութագրել, քանի որ ինձնից տարիքով փոքր ես և առողջ մտքի տեր, և թե ինչ նոր իրադարձություններ են լինելու ամառվա առաջիկա օրերին, ես չեմ կարող գուշակել, բայց մի բան հաստատ գիտեմ, որ Հայաստանում ստեղծված ճգնաժամը դեռ շարունակվելու է և, դժբախտաբար, նրա ալիքը կհասնի Արցախ:

2021թ. ամռան մասին խոսելիս թույլ տվեք բավարարվել վերը նշվածով և անցնել սրանից 30 տարի առաջ՝ 1991թ. ամռան իրադարձություններին: Ես արդեն մի քանի անգամ հիշատակել եմ, որ օրագիրս, ավելի քան 40 հոդվածներս («Ո՛չ՝ պատերազմին» վերտառությամբ) գերեզմարված են Շուշիում՝ թոռնուհուս բնակարանում, և այսօր էլ նյութեր չեմ գտնում այդ ժամանակահատվածի իրադարձություններն ընթերցողիս գիտակցությանը հասցնելու: Շատ զարմանալի է, որ մեր հանրապետական գրադարանն իր արխիվներում չունի 1991թ. «խորհրդային Ղարաբաղ» թերթի հավաքածուն: Նրա տնօրեն տիկին Անահիտն ինձ հայտնում է, որ այդ օրերին հանրահավաքների, գործադուլների մեջ են եղել: Իսկ միջնեկ աղջիկս էլ (այդ օրերին նրա ամուսնության արարողությունն էր) ինձ հանգստացնում է, որ եթե այդ օրերին մթնոլորտը շիկացած լիներ, ապա հո հարսանիքը չէ՞ր կայանա: Եվ ես, մի կերպ վերհիշելով այդ օրերը, հիշեցի, որ այդ արարողությունը կազմակերպել եմ մեր սեփական տան (Կնունյանցների 42 հասցեում) բակում: Տունս, որ մի քանի անգամ 1991-1994թթ. պատերազմի ժամանակ վիրավորվել է, այսօր չկա, և նրա տեղը Ազատամարտիկների գեղեցիկ պուրակն է, որը մեր քաղաքի գոհարներից մեկն է: Ստիպված եմ գրել հիշողությամբ:

Այսպես...
1991թ. ամռանը շարունակվում էր «Կոլցո» տխրահռչակ գործողությունը, որը կազմակերպված էր և անց էր կացվում Աղբբեջանի միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների և ԽՍՀՄ ՆԳՆ-ի համատեղ ուժերով «անձնագրային ռեժիմի ստուգման» անվան տակ: Դա պետական ահաբեկչության անմախառնապետական ահաբեկչության անմախառնապետական ահաբեկչություն էր Շարժումը գլխատելու, ազգային միասնությունը խարխուլելու նպատակով, ինչպես անցած ամիսներից գրել եմ, առաջին գոհերը դարձած Աղբբեջանի Խանլարի շրջանի հայկական Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակչությունը, նրա արական բնակչությունը դուրս տարվեց անհայտ ուղղությամբ՝ թողնելով ընտանիքներն անպաշտպան, անձնագրային ռեժիմի ստուգման ուղեկցությամբ՝ թալանով ու ավազակությամբ:

Այդ օրերին ձերբակալությունների նոր ալիք սկսվեց, որին անմիջական մասնակցում էր ԼՂԻՄ ներքին գործերի վարչության պետի տեղակալ Գուլիկը: Բաքվից եկած ՊԱԿ զինվորականների մասնակցությամբ շրջապատում էին Ղարաբաղյան շարժման ակտիվիստների տները և մտնում ու ձերբակալում՝ կարծելով, թե դրանով վերջ են տալու Շարժմանը: Նրանք չէին հասկանում, որ քանի գնում, Ղարաբաղյան շարժումը վերելք է ապրում և ավելի կազմակերպված բնույթ ստանում, այն դեպքում, երբ Աղբբեջանի սատար կանգնած ԽՍՀՄ-ը իր նեխած ղեկավարության հետ միասին հոգեվարք էր ապրում և ամեն ինչի դիմում փլուզում փրկվելու համար: Բայց դարձյալ օգնում է Աղբբեջանին, որի ներկայացուցիչ Գուլիկը այդ օրերին ստորագրել էր 500 մարդու ձերբակալման

թղթերը, որել ԽՍՀՄ ՆԳՆ գորախմբի հրամանատարության ձեռքը, որպեսզի ի կատար ածեն: Դա կատարյալ տեռոր էր, և ինչպես իր «Արցախի պաշտպանության դիրքերում» գրքույկում Ռազմիկ Պետրոսյանն է վկայում, ձերբակալվում էին ոչ միայն Շարժման ղեկավարները, այլև միանգամայն պատահական մարդիկ: Ձերբակալությունների ժամանակ մարդկանց բառացիորեն թալանում էին, զավթում նրանց տներում եղած թանկարժեք իրերը, փողը, զարդերը: Ձերբակալվածներին տանում էին տարբեր քաղաքներ՝ Բաքու, Շուշի, Եվլախ, Ֆիզուլի, Աղդամ, Բարդա: Նրանց մի մասը սպանվեց, որոշ մասն էլ ազատվեց Գուլիկին, դատախազին և մյուս պաշտոնյաներին կաշառք տալու դիմաց, իսկ որոշ մասն էլ տանջամահ եղավ բանտերում: Ձերբակալությունների ալիքը տարածվել էր Ղարաբաղի ամբողջ տարածքով, վիճակը քանի գնում, սրվում ու ավելի էր շիկանում: Եվ ահա այդ օրերին.

19.07.1991թ. տեղի ունեցավ ժողպատգամավորների ԼՂ մարզային խորհրդի նիստը, որտեղ քննարկվեց հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ աղբբեջանական կողմի հետ երկխոսություն սկսելու հարցը: Զգիտես ինչու, Շարժման ղեկավարներից ոմանք, և ընդհանրապես ԼՂԻՄ-ի որոշ ղեկավարներ, դեռևս հույս ու հավատ ունեին, որ կարող են թուրքի հետ լեզու գտնել:

26.07.1991թ. մեր պատվիրակությունը համարձակվում է մեկնել Բաքու, որտեղ հանդիպում է Աղբբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հետ և երկար գրույցներից ու առաջարկություններից հետո էլ ոչ մի ընդհանուր եզրակացության չգալով, առանց որևէ կոնկրետ արդյունքի, վերադառնում է Ստեփանակերտ: Դեռ լավ է, որ պատվիրակության կազմը լրիվությամբ վերադարձավ և սկսեց նորանոր ուղիներ փնտրել ստեղծված դրությունից ելք գտնելու: Շարժման ղեկավարներից մարդիկ գտնվեցին, որոնք սկսեցին հենվել 1990թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ ԳԽ-ի՝ «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի» մասին օրենքի վրա, որի երրորդ հոդվածում ասվում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվե է անցկացվում ամեն մի ինքնավարությունում առանձին: Ինքնավար կազմավորումների ժողովուրդները իրավունք ունեն ինքնուրույն վճռելու խորհրդային Միության կազմում կամ նրա կազմից դուրս ելող միութենական հանրապետությունում մնալու հարցը, ինչպես նաև կարգավորելու սեփական պետական-իրավական կարգավիճակի խնդիրը»:

Ահա այս դրույթներն են, որ ամբողջ 1991թ. ամառվա ընթացքում ուսումնասիրման ու քննության առարկա էին դարձել, և ամեն ինչ արվում էր դրանք օգտագործելու ու Աղբբեջանի փշոտ ճակերից ազատվելու համար:

Ընթերցողին քաջ հայտնի է, որ ԽՍՀՄ-ը փլուզումից փրկվելու նպատակով 1991թ. մարտի 17-ին անցկացվեց հանրաքվե բարեփոխված ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ, որից հետո Մ. Գորբաչովը 1991թ. ապրիլին բանակցային գործընթաց էր սկսել խորհրդային ինքնիշխան հանրապետությունների Միության ստեղծելու մասին պայմանագիր մշակելու համար, որի գործընթացի ավարտի մասին նա հայտարարեց հուլիսի վերջին:

Մառլեն ՀԱՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
անհարական թոշակառու

ՄՏԵՐԾԱԿԱՆ

ՍՈՎՈՐԵՆԷ, ՈՐ ՉՆԵՈՒՆԱՆԷ



Երա մասին խոսելիս գործընկերներն օգտագործում են «համարձակ, վճռական, նախաձեռնող, կենսախիղ, առաջնորդող, չեղանշող ու չնահանջող» բնորոշիչները, իսկ ԱրՊՅ «Անգլերեն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռուզաննա Մինասյանն իր նախկին ուսուցչին մեկ բառով բնութագրելու խնդրանքին ի պատասխան առանց երկմտելու ասաց՝ ոգեշնչող: Ռուզաննայի մասնագիտական ընտրությունն էլ հենց ասածի հավաստունն է: Արդեն 11-րդ դասարանում էր, երբ հայտնվեց անգլերենի նոր ուսուցիչն ու գլխավոր շուրջ տվեց ապագա մասնագիտության հետ կապված իր պլանները...

2018թ. հունվարին, հաղթելով անգլերենի ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթում, Լիլյա Շատուրյանն աշխատանքի անցավ իննասուրհի միջնակարգ դպրոցում: Առաջին իսկ օրը պարզ դարձավ, ընկեր Շատուրյանի դասին կատակները չեն անցնի: Մայրաքաղաքից եկած երիտասարդ ուսուցչուհին բուհն ավարտելուց անմիջապես հետո «մարտական մկրտություն» էր ստացել Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցում: Երբ ուսուցիչ լինելը պարզապես աշխատանք չէ, այլ աստվածաշնորհ կոչում, գյուղական և քաղաքային դպրոցների միջև միակ տարբերությունը քեզ համար աշակերտների քանակն է: «Աշակերտն ամեն տեղ էլ նույն երեխան է՝ պատրաստ ընդօրինակելու թե՛ սևը, թե՛ սպիտակը, ու միայն քեզից է կախված՝ որ գույնը կգերակշռի նրա կյանքի կտավում»,- հենց այս խորը համոզմամբ էլ Լիլյան մտավ դպրոց: Համոզմունքը դարձավ գործ, իսկ գործը՝ փորձ, որը շուտով Լիլյային պիտի օգներ ի կատար ածելու վաղեմի երազանքը: Անգլերենի ուսուցման սեփական կենտրոն բացելու գաղափարը ծնվել էր դեռևս դպրոցական տարիներին, երբ ինքն անցնում գիշերներ էր անցկացնում անգլերենի լեզվաբանական մացառուտներից դեպի բացատ տանող արահետը գտնելու համար: Տքնաջան աշխատանքն, անշուշտ, տվեց ցանկալի արդյունքը. հաջողությամբ քննություններ է հանձնել IELTS և TOEFL ոչ լեզվակիրների անգլերենի ինացությունը ստուգող միջազգային թեստերով: Տարիներ շարունակ նրա սաներն ընդունելության քննություններին գրանցել են բավականին բարձր արդյունքներ: Ներկայումս դասախոսում է «Մետրոպ Մաշտոց» համալսարանում և շարունակում է ուսուցը ԵՊՅ ասպիրանտուրայի «Անգլերեն» բաժնում: Արտեղ էլ հայտնվում է Լիլյան, մարդկային որակներն ու մասնագիտական հմտությունները կարճ ժամանակում նրան դարձնում են անհրաժեշտություն:

- **Իննասուրհի ուսուցչական և աշակերտական մեծ ընտանիքի անդամ էի: Չե՞ք պիտու, որ հեռացել եք:**

- Ես ընտանիքից չեմ էլ հեռացել: Գործընկերներին ու սաներին հետ առայսօր սերտ կապի մեջ եմ: Իսկ դպրոցում դասավանդելու ծարավս լիովին հագեցնում եմ Կենտրոնում, որտեղ 5-5,5 տարեկան աշակերտների հետ անկեղծ հրճվանք եմ ապրում սովորած յուրաքանչյուր նոր բառի համար:

- **Ի՞նչ է իրենից ներկայացնում «STAR» անգլերենի կենտրոնը:**

- Կենտրոնում տարիքային սահմանափակում չի գործում: Դասընթացներն անց են կացվում խմբային, շաբաթական 2 անգամ՝ 90 րոպե տևողությամբ: Յուրաքանչյուր մասնակցի ցուցաբերվում է անհատական մոտեցում: Ծրագրերն ու դրանց մակարդակները տարբեր են, քանի որ տարբեր են նաև անգլերեն սովորողների պահանջներն ու նպատակները: Խոսակցական անգլերենից մինչև նեղ մասնագիտական մատուցվում է զա-



նագան մեթոդներով՝ մշակված աշխարհի հեղինակավոր ուսումնական հաստատություններում: Կազմակերպվում են ուսուցողական արշավներ, խաղեր, կինոդիտումներ ու քննարկումներ:

Անչափ կարևորվում է հաղորդակցությունը լեզվակիրների հետ: Դասընթացը բաղկացած է 6 փուլից՝ յուրաքանչյուրը 3-6 ամիս տևողությամբ: Վերջում մասնակիցը հանձնում է քննություն և ստանում հավաստագիր:

- **«STAR» անվանումը նախապատմություն ունի՞:**

- Դեպի երազանք տանող ուղին միշտ էլ տատակապատ է: Միայնակ չէի կարող հաղթահարել այն: Անուսինս հավատացել և աջակցել է ինձ ամեն մի հարցում: Նա միշտ ասում էր, որ իմ ներքին էներգիան անսպառ ու հզոր է և ուղեցույց աստղի պես ուղղորդում է նաև իրեն: Երկար չտատանվեցիք անվան ընտրության շուրջ: Իմ կենտրոնում սովորողը պիտի ստանա այնպիսի լեզվական պաշար, որը նրան կօգնի հասնելու իր աստղին, այսինքն՝ փափագած հաղթանակին: Ինչպես ասում էին իմ հռոմեացիները «Per aspera ad astra»:

- **Դուք Չեզ ուժեղ կին համարո՞ւմ եք:**

- Ես ուժեղ եմ համարում իմ երկրի բոլոր կանանց: Պարզապես ես տրտնազանցողներից չեմ: Համառությունն ու նպատակասլացությունն ինձ համարձակություն են հաղորդում:

- **Կենտրոնի գործունեությունն ընդլայնելու պլաններ ունե՞ք:**

- Ի սկզբանե նպատակ ունեի կազմակերպել բազմալեզու դասընթացներ (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն): Համապատասխան որակավորում ունեցող մասնագետների և ավելի ընդարձակ տարածքի ընտրու-

թյամբ էի զբաղվում արդեն: Պատերազմը խաթարեց նաև իմ պլանները, բայց չստիպեց դրանցից հրաժարվել: Բոլորն ասում են, որ ապագան մշուշոտ է: Իսկ մի՞թե մշուշում կորչելն ավելի հեշտ չէ, երբ դու նույնիսկ չես փորձում ելք գտնել:

- **Պատերազմից հետո փոփոխություն նկատվո՞ւմ է Կենտրոնի դիմողների քվաքանակում:**

- Չգալի ան է գրանցվել: Դա անչափ ոգևորիչ կլիներ, եթե չլիներ արտագաղթի վտանգը: Ինձ անասելի ցավ է պատճառում, երբ որևէ մեկն անգլերեն սովորելու իր որոշումը պատճառաբանում է վաղ թե ուշ հայրենիքն ընդմիջող լքելու մտադրությամբ: Ես ինձ շատ ավելի բավարարված կզգամ այն դեպքում, եթե իմ քրտնաջան աշխատանքի արդյունքը նպաստեր իմ երկրի զարգացմանը:

- **Ո՞րն է ամենօրյա ծանրաբեռնված աշխատանքի ռիթմին դիմանալու գաղտնիքը:**

- Սշտագբաղ լինելը գեր է պահում այն ամենից, ինչը սին է ու կործանարար: Սովորելն ու սովորեցնելն ինձ հավասարաչափ բավականություն են պատճառում: Տարբեր սերունդներ ներկայացնող աշակերտներն ու ես միմյանց սովորեցնում ենք փոքր քայլերի արվեստը. հնչյունից մինչև նախադասություն, որոշումից մինչև հաղթանակ: Երբ օրվա վերջին հալից ընկած ես, բայց ոչ պարտված. ահա և ամբողջ գաղտնիքը:

- **Ի՞նչ խորհուրդ կտայիք նրանց, ովքեր որոշել են անգլերեն սովորել:**

- Ողջունելի է, որ գնալով ավելի ու ավելի շատ մարդիկ են գիտակցում միջազգային լեզուներին տիրապետելու կարևորությունը: Դա ոչ միայն լայն հնարավորությունների դռներ է բացում աշխատանքում աճելու, այլև աշխարհը բացահայտելու համար: Ինքս էլ սիրում



եմ ճամփորդել, ճանաչել նորը, զմայլվել ու ամեն անգամ տուն վերադառնալիս ասել. «Մին ա, Ղարաբաղն լավ տեղ չկա»:

Ուրեմն, եկեք սովորենք անգլերեն, չինարեն, ֆիզիկա, մաթեմատիկա, խոհարարություն ու վարսահարդարում, ինչ կուզեք ու կարող եք շատ լավ անել: Բայց ոչ թե դրանք օտարի շահերին ծառայեցնելու, այլ մեր դեմքն աշխարհին ճանաչելի դարձնելու համար:

Մեղինա ՄԵՇԼՈՒՄՅԱՆ

ՄԵՆԷ ԱՊՐՈՒՄ ԵՆԷ, ՄՏԵՐԾՈՒՄ ՈՒ ՄՏԵՐԾԱԳՈՐԾՈՒՄ

ՀԲԸՄ նախաձեռնությամբ Արցախում էին բեկվացի երաժիշտներ Սևակ Ավանեսյանը (թավջութակ), Հրաչյա Ավանեսյանը (ջութակ) և Մայա Լեվին (ջութակ):

Պրոֆեսիոնալ երաժիշտները հուլիսի 13-ին Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում վարպետաց դասեր անցկացրին, որին մասնակցեցին Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի, «Գյուլոջյան» արվեստի դպրոցի սաները:



«Հիացած եմ երեխաներով, երեք շատ տաղանդավոր թավջութակահարի հետ աշխատեցի: Գործընկերներս ասում են՝ նաև ջութակահարներն են շատ լավ: Այս երեխաներին մեծ ապագա է սպասվում: Պատերազմից հետո առաջին անգամ եմ Արցախում: Ինձ ուժ է տալիս այն փաստը, որ կյանքը շարունակվում է այստեղ: Այս պահին մենք երկու տարբերակ ունենք. կամ հայ ազգը պիտի ոչնչանա,



կամ պիտի արժանապատիվ ապրի: Իսկ ես տեսնում եմ, որ մենք ապրում ենք, ստեղծում ու ստեղծագործում».

թավջութակահար Սևակ Ավանեսյանի տպավորություններն են երեխաների հետ աշխատանքից հետո: Սևակ Ավանեսյանն առաջին անգամ չէ, որ Արցախում է: Արդեն 3 տարի է՝ մասնագիտական աջակցության տարբեր ծրագրերով պարբերաբար այցելում է Արցախ: Վերջին այցը պատերազմի օրերին էր, երբ Շուշիի Սբ. Ղազանչեցոց մայր տաճարի ավերակների միջից արվեստի լեզվով աշխարհին պատմեց մեր պայքարի, ոգու մասին. «Ես Ղազանչեցոցում չնվազեցի հայտնի դառնալու համար, բայց դարձա: Եվ դա օգտագործում էի ամեն տեղ հայի տեսակը ցույց տալու համար»:

Օրը եզրափակվեց համերգային ծրագրով՝ բեկվացի երաժիշտների և Ստեփանակերտի երաժշտական կրթօջախների սաների մասնակցությամբ:

Հյուրերը գլխավոր աջակցի՝ ՀԲԸՄ-ի հետ միասին այս անգամ նվերներով էին եկել: Հաղորդի արվեստի դպրոցն ու Մարտունու մշակույթի տունը նոր դաշնամուրներ ստացան:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը շնորհակալագիր հանձնեց Սևակ Ավանեսյանին, շնորհակալություն հայտնեց հյուրերին և կարևորեց այս օրերին լավ մարդկանց մուտքն Արցախ:

«Պատերազմի օրերին Չեր նվազը Ղազանչեցոցից կոնտրաստային էր. բարձր արվեստ ու բարբարություն, որոնք կողք կողքի չեն կարող ապրել: Չեր նվազն այդ օրերին մեզ հավատ, հույս և պայքարի ոգի ներշնչեց: Մենք աշխարհին մշակույթ տվող ազգ ենք, բայց այդպես էլ չենք զնահատվել: Շնորհակալ ենք Չեր տեսակի համար, որ այդքան արվեստ ու նաև ուժ էր կրում Չեր մեջ: Մի օր նորից «Կռունկ»-ը նվազելու ենք Ղազանչեցոցում, մենք հավատում ենք դրան», - ասաց ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

«Մշակութային Արցախ»

ՄԵԹՈԴԱԿԱՆ

ԿԱՌՈՒՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՏՈՒՄԸ ՎԱՆՂԱԿԱՎՈՐ ԹՂԹԻ ՎՐԱ

Մույն հոդվածի նպատակն է լուծել կառուցման խնդիրներ՝ օգտվելով միայն քանոնից, քառակուսի վանդակավոր թղթի հնարավորություններից և հանրահաշվական բանաձևերից:

Կառուցման խնդիրները ուսումնասիրում են և՛ բուհերում, և՛ դպրոցի 7-10 –րդ դասարանների երկրաչափության դասընթացներում:


Ակնհայտ է, որ կարկինի կիրառությունից հրաժարվելը բարդացնում է կառուցման խնդիրների լուծումը: Բայց այդ բարդությունը ստեղծում է նախապայման մտածելու, դատելու և ստեղծագործելու խնդրի լուծումը գտնելու համար: Մույն իրավիճակը ոչ թե մտացածին է, այլ երկար տարիների ուսուցման պրակտիկան: Այսինքն՝ երկրաչափության դասերին աշակերտների և ուսանողների մեծ մասի մոտ առկա չէ կարկին: Հետևաբար, պետք է մտածել այլ ձևերով իրականացնել կառուցման խնդրի լուծումը:

Պարզվում է, որ նման իրավիճակում նպատակահարմար է օգտագործել քառակուսի տետրի վանդակավոր թուղթը, որը միշտ ունեն աշակերտները, ուսանողները մաթեմատիկայի դասերին և օգտվել հանրաշվական բանաձևերից:

Երկրաչափական կառուցումները կարող են խաղաղ էական դեր դպրոցականների մաթեմատիկական կրթության զարգացման հարցում: Որևէ բնույթի խնդիր չի կարող տալ այնքան մաթեմատիկական նախաձեռնության նյութ, որքան երկրաչափական կառուցման խնդիրները: Այդ խնդիրները սովորաբար թույլ չեն տալիս աշակերտի կողմից ստանդարտ մոտեցում, ձևական ընկալում: Կառուցման խնդիրները հարմար են երկրաչափական նյութի ամրապնդման համար դպրոցական երկրաչափության տեսության ցանկացած բաժնի վերաբերյալ: Լուծելով կառուցման խնդիրներ՝ սովորողները ձեռք են բերում մի շարք օգտակար գծագրական հմտություններ:

Խնդիր 1. Հատվածի երկարության կրկնապատկումը:

Լուծում. Եթե հատվածն ունի հորիզոնական կամ ուղղահիվ դիրք թղթի վրա, ապա լուծումը դառնում է պարզ: Ուստի դիտարկենք այն դեպքը երբ հատվածի ծայրակետերը ընտրված են թերթի հանգույցներում:



Նկ. 1


Քառակուսի թղթում ընտրենք մի ուղղանկյուն, օրինակ՝ 7x4 չափսի և կառուցենք նրա AB անկյունագիծը: Այն շարունակենք նույնքան և կստանանք AC հատվածը, նկ. 1: Նույն ձևով կարելի է իրականացնել հատվածի n-ապատկումը:

Խնդիր 2. Կառուցել AB հատվածի միջնակետը:


Լուծում. AB հատվածի վրա կառուցենք զուգահեռագիծ իր անկյունագծերով:

O կետից տանենք ուղիղ զուգահեռ AD-ին: Այն կհատի AB-ն X կետում այնպես, որ տեղի ունի AX = XB պայմանը, նկ. 2:

Խնդիր 3. Հատվածի բաժանումը նշված թվով հավասար մասերի:



Նկ. 2




Նկ. 3

Լուծում. Տրված AK հատվածը 5 հավասար մասերի բաժանելու համար A կետից տանում ենք ճառագայթ, որն անցնում է 1x2 չափսերով ուղղանկյունների անկյունագծերով: Այդ ճառագայթի վրա անջատում ենք 5 հավասար հատվածներ և այդ կետերից տանում զուգահեռ ուղիղներ, նկ. 3:

Թալեսի թեորեմի համաձայն, AK հատվածի վրա կառուցանան 5 հավասար հատվածներ, նկ. 3:

Խնդիր 4. Հնարավոր է, արդյոք, քառակուսի վանդակավոր թղթում կառուցել ուղիղ, որը չանցնի վանդակավոր թղթի ոչ մի հանգույցով, նկ. 4:

Լուծում: Կորորդինատական համակարգում դիտարկենք y = sqrt(2) * x ուղիղը:



Նկ. 4

Ապացույցը կատարենք հակասող ընդունելության մեթոդով: Եթե այն հատում է որևէ հանգույց, իսկ հանգույցի կորորդինատները ամբողջ թվեր են, ապա ստացվում է, որ մեր ուղիղի վրա կան ամբողջ կորորդինատներով կետեր. ստացանք հակասություն: Այսինքն՝ մեր ուղիղը չի անցնում վանդակավոր թղթի ոչ մի հանգույցով, բացի կորորդինատների սկզբնակետից, նկ. 4:

Խնդիր 10. Կառուցել ուղղանկյուն եռանկյուն, եթե տրված են նրա էջը և մյուս էջի և ներքնաձիգի գումարը, նկ. 5:


Լուծում. Նշանակենք տրված էջը a-ով, մյուս էջը՝ x-ով, իսկ ներքնաձիգը՝ y-ով: Մյուս էջի և ներքնաձիգի գումարը նշանակենք (x+y)-ով:

Պյութագորասի թեորեմից կգրենք, նկ.5:

a^2 + x^2 = y^2; y = b - x; a^2 + x^2 = (b - x)^2; a^2 + x^2 = b^2 - 2bx + x^2;

2bx = b^2 - a^2; x = (b^2 - a^2) / 2b = ((b-a) * (b+a)) / 2b => x / (b-a) = (b+a) / 2b:

Որպեսզի համոզվենք ստացված x հատվածի երկարության ճիշտ լինելու մեջ,




Նկ. 5

տեղադրենք սովյալների թվային արժեքները ըստ նկ.5-ի:

a = 4, x = 3, y = 5, b = x + y = 8, 2b = 16, b - a = 4, b + a = 12:

x = ((b-a) * (b+a)) / 2b = (4 * 12) / 16 = 3:

Նկ. 6-ում պատկերված են որոշ քառանկյունների կառուցման օրինակներ:



Գրականություն

1.Б.И. Аргунов и М. Б. Балк, Геометрические построения на плоскости. Москва, 1955.
2.Առաքելյան Ռ. Լ. Մաթեմատիկա. Չեռնարկ տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության համար, IV մաս, «Զանգակ – 97» հրատարակչություն, Երևան 2010 թ.

Ռ.ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արդ՜ մաթեմատիկայի ամբիոնի դասախոս,
մ.գ.թ., պրոֆ.-ի պաշտ.-ը

Մեկ բանաստեղծությամբ

СЕРЫЙ КАМЕНЬ

Серый камень,
Серый камень
Над могилою солдата,
Мог ли думать ты когда-то,
Что разлучишь будто пламень
Ты сестру от её брата...?

Чтоб под небом жило вечно-
Столько, сколько живо ВРЕМЯ-
Айка и Тиграна!!!

Серый камень,
Серый камень
Над солдатскою могилой,
Мне о матушке поведай,
Нарисуй мне облик милой,
Прошепчи её страданья
И скажи; была Победа...?

Серый камень,
Серый камень,
Передай посланье маме
Чтоб не лила слёзы больше.
Ведь порвётся там, где тоныше.
А что тоныше сердца Мамы...??!

Серый камень,
Серый камень
Надо мною словно зная,
Чтобы люди вечно знали-
Мы попали в бесконечность

Серый камень,
Серый камень,
Прошепчи сестре однажды
Не ходить к тебе день каждый
И не обнимать могилу-
Я давно её покинул...

Карен МАНАСЯН
Учитель английского языка
шк. N2, г.Чартар

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՅԱԽՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀԱՂԹԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԻՆԳՈՒՄ

Ստեփանակերտի Մանկապատանեկան մարզադպրոցի մուայթայի մարզիչ Ալեքսան Աղաբալյանը մարզական էջին տված նախորդ հարցազրույցներից մեկում նշել էր, որ սա- ները, հաջողություն ունենա- լով 33 առաջնությունում, մասնակցելու են Վրաստա- նում կայանալիք միջազգային առաջնության: Ընդ որում, մարզչի կանխատեսմամբ սպասվում էին մեծ հաղթա- նակներ: Եվ ահա արցախցի մարզիկների միջազգային ռինգում հաղթանակների մա- սին լուրերը սպասել չսովե- ցին:



միայն հպարտանալ իր սաների հաջողություններով: Հայտնի դարձավ, որ մրցաշարի ժամանակ վրացի մրցավարի կողմից կողմնապա- հուկության դեպք է եղել ի վնաս հայ մարզիկի: Էդգար Բաբայանի առաջին մենամարտը վրացի մարզիկի հետ էր: Երեք ռաունդում էլ Էդգարի միավորներն առավել էին, սակայն մրցավարի կողմնապահության հետևանք- քով հաղթանակը չտրվեց մեր մարզիկին: Մարզչի բողոքարկ- ման արդյունքում արդարությու- նը վերականգնվեց: Էդգար Բա- բայանը նորից մենամարտեց վրացի մարզիկի հետ, բնակա- նաբար ավելի շատ ձգտելով

հաղթել: Բացարձակ առավելությամբ հաղթա- նակը տրվեց Էդգարին:

Փաստորեն մեր մարզիկների՝ մարզածե- ին տիրապետելու բարձր աստիճանը, արդար պայքարն ու մարտական բարձր ոգին չեն նա- հանջում նույնիսկ կողմնակալ մրցավարա- կան կազմի ստոր քայլերից: Մարզելուց բացի մարզիչները լավ դիվանագետներ պետք է լի- նեն նման դեպքերի համար: Այս առումով մարզիչ Աղաբալյանի դիրքորոշումը միանգա- մայն հուսադրող է: Արդեն նախապատրաստ- վում են առաջիկա մրցաշարերին: Օգոստոսի վերջին պատրաստվում են կրկին մեկնել Վրաստան՝ Բաթումիում մասնակցելու կայա- նալիք միջազգային առաջնության: Նախա- տեսվում է նաև մասնակցել սեպտեմբերի 4- 9-ը Կազանում կայանալիք մուայթայի առաջ- նության, ինչպես նաև մուայթայի երիտա- սարդների միջև աշխարհի առաջնության, հոկտեմբերի վերջին Սոչիի մի- ջազգային առաջնության, իսկ դեկտեմբերին Թայլանդում կայանալիք մեծահասակների աշխարհի առաջնության:

Հուլիսի 1-4-ը Թբիլիսիում կայացած Մուայթայի միջազ- գային մրցաշարին (Թբիլիսիի գավաթ) 33 հա- վաքական կազմի ներքո մասնակցել են մու- այթայի արցախցի 12 մարզիկներ՝ մարզիչ Ալեքսան Աղաբալյանի գլխավորությամբ: Փայլուն հանդես գալով մրցաշարում, մրցե- լով ուժեղագույն մարզիկների հետ՝ մեր սա- ները գրանցել են հաղթանակներ եւ զբաղեց- ռել են մրցանակային տեղեր: Մասնակից 12 մարզիկներից 5-ը դարձել է չեմպիոն: 6 մար- զիկ զբաղեցրել է երկրորդ, իսկ 1 մարզիկ՝ եր- րորդ մրցանակային տեղ: Ոսկե մեդալակիր չեմպիոններն են՝ Վլադիսլավ Պետրոսյան (16-17 տ., 60 կգ), Էդգար Բաբայան (12-13 տ., 40 կգ), Սերգեյ Կարաբե (12-13 տ., 46 կգ), Արտյոմ Սարգսյան (10-11 տ., 30 կգ), Հրայր Հարությունյան (14-15 տ., 57 կգ):

Պատանի մարզիկ Վլադիսլավ Պետրոսյա- նը կիսաեզրափակչում հաղթել է վրացի մար- զիկի, իսկ եզրափակչում հանդիպել է ադրբե- ջանցու: Մարզչի մեկնաբանությամբ՝ ար-

ցախցի մարզիկը երեք ռաունդ գերազանց պայքարելով՝ բա- ցարձակ հաղթանակ է տարել ադրբեջանցի մրցակցի հան- դեպ: Արտյոմ Սարգսյանը երկու մարտ է ունեցել: Ինչպես կիսա- եզրափակչում, այնպես էլ եզրա- փակչում մրցել է ադրբեջանցի մարզիկների հետ ու հաղթել: Մարզիչ Ա. Աղաբալյանի խոս- քով՝ հաղթանակի հիմքը ար- ցախցու արյան մեջ է: Արցախ- ցին իր զենով հաղթող տեսակ է: Մարզիչը կարելու է մարզի- կի ցանկությունը եւ մարզչի աշ- խատանքը սպորտում հաջողու- թյան հասնելու համար: Ցանկա- ցած մրցաշար քրտնաջան պա- րապմունքների արդյունքն է ցույց տալիս: Մարզիչը կարող է



ԱՐՅԱԽՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ՝ ԱՆԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Արցախի մարզիկները շարունակում են հաջողություն արձանագրել միջազգային մր- ցաշարերում: Հերթականը Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի ներկայացուցիչների արձանագրած հաջողու- թյունն է: Մեր հայրենակից մարզիկները մաս- նակցել են աշխարհի առաջնության եւ վերա- դարձել բրոնզե մեդալներով ու գավաթներով:

Հուլիսի 4-11-ը Բուլղարիայի Վառնա քա-ղաքում կայացած Կիոկուշինկայ կարատեի KWS աշխարհի գավաթի առաջնության Ար- ցախի մարզիկները մասնակցել են 10 հոգա- նոց կազմով՝ յոթ մարզիկ եւ երեք մարզիչ: Մրցելով ուժեղագույն մրցակիցների հետ մեծահասակների (մինչեւ 21 տարեկան) խմբում՝ մեր մարզիկները կարողացել են կիսաեզրափակչում հաղթանակներ ունե- նալ: Ընդ որում, մեր մարզիկի կողմից հաղ- թանակ է արձանագրվել թուրք մրցակցի նկատմամբ:

«Լուսաբար»-ը ներկա գտնվեց «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մարզադահլի- ծում՝ առաջնության բրոնզե մեդալակիր, ֆեդերացիայի մարզիկ եւ մարզիչ Ռուդի Քամայանի՝ սաների կողմից դիմավորե- լու եւ շնորհավորելու հանդիսավոր արա- րողությամբ:

Ռուդի Քամայանը ծնվել է 2000թ. սեպ- տեմբերի 1-ին ճարտարում: Ավարտել է դպրոցը Ստեփանակերտ քաղաքում եւ ըն- դումվել «Գրիգոր Նարեկացի» համալսա- րանի ֆիզիկական դաստիարակության բաժինը: Ներկայում համալսարանի երկ- րորդ կուրսի ուսանող է: 2019-2021թթ. ծա- նայել է ՊԲ-ում: Մասնակցել է 44-օրյա պա- տերազմին: Սպորտի հանդեպ մանկուց սեր է տածել: Սկզբում պարապել է թանքվոնդո, սամբո, իսկ 2014-ից ընկնում է կիոկուշին կա- րատեի աշխարհ: Մեզ հետ զրույցում անկեղ- ծամում է, որ կիոկուշին իրեն ուղղակի դուր է

ելել իր առանձնահատկություններով: Ռուդի Քամայանը 33 բազմակի չեմպիոն ու մրցա- նակակիր է: Մարզական գործունեության ըն- թացքում մասնակցել է Ուկրաինայի կիո- կուշին կարատե դո ֆաջ առաջնության եւ զբաղեցրել երկրորդ տեղ: 2018թ. հռչակվել է Վրաստանի կիոկուշինի առաջնության չեմ- պիոն: Հունվարին գորացրվելուց հետո վերսկսել է ակտիվ մարզումները, իսկ մոտ մեկ ամիս առաջ դարձել է ֆեդերացիայի մար- զիչ: Այժմ նրա մոտ պարապում է շուրջ 30 սան, որոնք հպարտությամբ են դիմավորում



աշխարհի առաջնությունից մրցանակով՝ բրոնզե մեդալով ու գավաթով վերադարձած իրենց մարզչին եւ ուզում են նմանվել նրան:

Առաջնության մրցանա- կակիրը պատմում է, որ մր- ցել են աշխարհի ուժեղա- գույն մարզիկների հետ: Ռուդի Քամայանը (մինչեւ 21 տարեկան, մինչեւ 65 կգ) առաջին մարտն ունե- ցել է Թունիսը ներկայա- նող մարզիկի հետ: Հաղթել է նրան: Երկրորդ մարտը Շվեյցարիան ներկայա- նող մրցակցի հետ էր: Լրա խոսքով՝ դժվարագույն մենամարտը դա էր, բայց կարողացավ հաղթել ու մտնել կիսաեզրափակիչ: Երրորդ մարտը կիսաեզ- րափակչում դազախ մր- ցակցի հետ էր, որը, սա- կայն, ավարտվեց մրցակ- ցի հաղթանակով: Դա- զախ մարզիկը մարզա- կան պատրաստվածությամբ առավելու- թյուններ ուներ: Այդ պատճառով մեր մարզի- կը հնարավորություն չունեցավ մենամար- տելու եզրափակչում եւ արժանացավ բրոն- զե գավաթի:

Առաջնության մյուս դափնեկիրն ընթեր- ցողներին ծանոթ, ֆեդերացիայի մարզիկ եւ մարզիչ Դավիթ Ավետիսյանն է (մինչեւ 21 տարեկան, մինչեւ 70 կգ): Առաջնությունում նրա տված մեկնարկը միանգամայն ոգեւո- ռիչ էր: Առաջին մարտը Թուրքիան ներկա- յացնող մարզիկի հետ էր, որին կարողացավ հաղթել: Սա, իհարկե, մեծ ձեռքբերում է մեզ համար: Երկրորդ մարտը բուլղարացու հետ էր, որին եւս հաղթելով՝ Դավիթը կարողա- ցավ մտնել կիսաեզրափակիչ: Երրորդ մար- տում հանդիպեց ուկրաինացի տիտղոսակիր մարզիկին, որին հաղթել չհաջողվեց: Դավիթ



Ավետիսյանը նույնպես արժանացավ բրոնզե գավաթի:

Ավելի մեծ արդյունքի համար խոչընդոտ էին պատերազմի պատճառով ու մինչ գո- րացրվելը պարապմունքներից երկարատե կտրվելը, ինչպես նաև ուժեղ մրցակիցներ ունենալը: Այնուամենայնիվ, պատերազմին մասնակցած մեր մարզիկները կարողացել են իրենց մեջ ուժ գտնել եւ վերադառնալ սպորտ ու շարունակել պայքարը: Տաղանդավոր եւ ուժեղ ոգով լեցուն մեր մարզիկները խոչըն- դոտների առջև նահանջելու սովոր չեն. առաջիկայում եվրոպայի առաջնությունն է, որը կկայանա սեպտեմբերին Լեհաստանում: Մարզիկներն արդեն սկսել են ակտիվ նախա- պատրաստվել առաջնությանը մասնակցելու եւ հաղթելու համար:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

ԱՐՁԱՍԽՅԱՆ ՇԱՐՓՈՒՄ

Զխեղճանաս, երբ ծնկներդ անսպասելիորեն թուլանան, կոպերդ դժվարորեն չենթարկվեն քեզ, և հոգևորական շղարշը ծանրորեն իջնի օրերիդ վրա: Դու դեռ կհասցնես սովորել, թե ինչպես են մարդիկ չեղածից ուժ ստեղծում, թաքցված լույս գտնում մթության մեջ, կսովորես պարտության դրոշմը կյանքիդ համար խարան չդարձնել, չհուսահատվել կսովորես և այն բնական օրինաչափությամբ, որով սովորում ես օրոցքից սկսած: Վախվորած առաջին քայլերն անելուց հետո են միայն վազել սովորում և վանկեր հեգելով են սկսում հռետոր դառնալ ու բեմեր գրավել: Բարեհամբույր սպասուհու նման կյանքը քեզ չի մատուցելու սրտիդ ուզածը, որքան էլ քմահաճ լինի քո հանդեպ, ինքդ պիտի հայթայթես, ինքդ գործես: Մեղքնորմիշտ հիշիր նաև, որ երբ ճանապարհի խոստումնալից է, դեպի լույս է տանում, կողքիդ սովորները ոչինչ փոխել չեն կարող:

Մի անգամ փորձիր հանել դիմակդ, ո՛վ դիմակավոր մարդ: Կարո՞ղ ես, չես կարող, որովհետև շարժում հպանցիկությամբ լուծվել է երեսիդ: Դիմակով քողարկված երեսդ այրված չէ, ոչ էլ անցյալից մնացած անորոշ կապտուկներ կան, բայց կոծկում ես երեսդ, դիմակ ես կրում, որովհետև դեմք չունես: Դիմախաղի մկաններդ էլ են սկսել աստիճանաբար նրան ենթարկվել, խորթացել են դիմակի շնչից, անբնականորեն են կծկվում, երբ ժպտում ես, միշտ կեղծ են թվում անմեղ մեղավորի քո զրջումները: Դիմակը հոգիդ կապել է զահավիժող անդունդից, նա քո առաջնորդն է դարձել, որ թվում է՝ տանելու է քեզ առաջ, բայց ավա՜ղ, դու մնալու ես նույն տեղում, նույն անդեմը, և խիղճդ է մի օր քեզ զլորելու այն նույն անդունդից, որտեղ կապված ես դիմակով: Քամին փողոցում պատերին կախված էին պաստառներն է պոկում՝ նրանց հետ տանելով նաև կրի և ավազի չորացած խառնուրդ, պատերը մերկացել են, ճաքճքել, զգուշացիր քամուց. դիմակիդ հետ նա շատ բան կարող է հավերժ տանել... Դեռ ժամանակ ունես, ինքդ հանիր...

Անցյալի գնացքը շատերը կնստեն ու կհեռանան, կզնան քամու ճանապարհով, որ էլ երբեք չզգան նրանց հեռանալը, քամու պես կզնան, որ միայն նրանց գալը նշմարեն: Նրանք անփութորեն կնստեն, անզգայացած ու բոլոր աղմուկներից հոգնած և չեն էլ մայի, թե որ համարի գնացքն է իրենցը, կնստեն պատահական մեկը ու կզնան, որովհետև հոգնել են սպասելուց: Լուռ թախիծով նրանց հոգիները պատեպատ կլինեն, բայց համբերելու ուժ չի մնա մշտապես չզնահատված լինելուց հետո, անսպասելի կզնան ու առանց հեռագիր թողնելու, որովհետև հոգնել են ուղարկված բոլոր հեռագրերի պատասխանը չստանալուց: Սառույցի վրա բոբիկ ոտքերով կանգնելու պես սոսկալի կլինի նրանց հեռանալը, դեգերումների ճանապարհին հոգի կմաշեն, կարտասվեն առանց հոգի, բայց կզնան՝ իրենց գնահատելու համար: Վերջին անգամ կժպտան այն կյանքին, որ թողնում են խաբուսիկ ու կեղծ մարդկանց, անմրմունջ կժպտան՝ իմանալով, որ կյանքն այդտեղ իրենց չի սպասելու իր հունն առաջ տանելու համար, կյանքն անողոք է, հեշտ կհամակերպվի կամ գուցե չի էլ զգա իրենց հեռանալը...

Քայլում ենք ու առաջ տանում կյանքը, մինչև ո՞ր, գուցե մինչև այնտեղ, որտեղից հետո կյանքն իր հունով է վազելու: Փորձելու ենք բռնել նրա ձեռքից, ամբողջ ուժով ձգել, որ չփախչի, բայց քմահաճ երեխայի պես վազելու է՝ մեզ իր ետևից քարշ տալով:

Տարբերակ ՂԱՅՐԱՍՏԱՆՅԱՆ ԱրՊՅ, հայոց լեզու եւ գրակ., 2-րդ կուրս

1.

Ես պտույտ եմ կատարում ժամանակագրության անդաստանում, մտքերս փոթորիկ են բարձրացնում, սիրտս մորմոքում է, երբ անցած օրերից պատմության ծայրն է ակնհայտ հասնում: Սարդարապատն իր հարյուր տարին է բոլորում, բայց հետքերն անհայտ չնմացին... Փրկվեց Չայաստանը, կարմիր, կապույտի և մարնջագույնի խառնուրդն օդում ծածանվեց, և Առաջին հանրապետության սկիզբը դրվեց: Երկամյա մի կարճ կյանք ու երեք տասնյակ տարի առաջ մեր լինելության համար Արցախյան շարժում, որ պիտի մի նոր պատերազմ ծավալեր ու նորից Չայոց երկրի անկախությունն ամրագրեր: Հաղթանակ է տոնում փոքրիկ Արցախյան ապրող ամրակուռ մի ժողովուրդ, ումից ահ ու սարսափը վաղուց հեռացել, պայքարի վճռականություն է դարձել:

2

Փետրվարյան այդ օրը զոհվածների հիշատակին հառնած հուշարձանին ծաղիկներ խոնարհեցի: Շուրջս լռություն էր, միապաղաղ հանգիստ, խաղաղ էր երկինքը, բայց և թախծոտ էին անցած օրերի հիշողություններս, որ երբեք մտքերս ինձ առաջ մղեցին, ու ես Չայկուհի տատի թոնրատուն մտա: Արցախյան շարժման ակնատեսն էի փնտրում: Չայկարամ պապը, ոտքից կաղալով, մեկիկ-մեկիկ քայլերով մոտեցավ թոնրին, ցախ գցեց, և կրակը բոցավառվեց: Նա աչքը հառեց կրակին, և բոցկլտաց սիրտը կիզված: Չայկուհի տատը ազգային երգի թախծալից մի քանի տողեր մրմնջաց և իր ձեռքում լավաշը պտտեցրեց: Նա թոնրի պատին կայցրեց, հետո կամաց լավաշները թոնրից հանեց, իրար վրա դարսեց: Ձեռքերս այրուղիվ շարափված՝ Չայկարամ պապին էի լսում, երբ հարազատ մորից Արցախին խլել և խորթ մորն էին հանձնել:

«1988 թվականն էր, փետրվար... Մի փոքրիկ երկիր առյուծի պես սկսեց դիմակայել, որ իր ինքնության ճանաչումը հաստատի ու անկախ հռչակվի, մայր Չայաստանին վերամիավորվի: Բազմաթիվ մտավորականներ ձեռք մեկնեցին արցախահայությանը և միահամուռ նպատեցին արցախյան հարցի բարձրացմանը... Գրողների միությունը կորիզ ստեղծեց, և ստորագրահավաքներ ստեղծվեցին... Ցույցեր կազմակերպվեցին, արցախցին «մի՛-ա՛-ցո՛ւմ» վանկարկեց, երկնուղեղ դիրքով բռունցք բարձրացրեց ու Արցախի անկախությունը պահանջեց: Սկիզբ առան գործադուլներն ու ցույցերը, որոնց զուգահեռ սկսվեցին նաև զանգվածային ձեռքարկությունները: Նոր նստաշրջան, որտեղ կայացվում էր Արցախը Մայր Չայաստանին վերամիավորելու հաստատում որոշումը: Արդե՞ք անը հրաժարվեց նպատեղ արցախահայության դարավոր ցանկությանը, ու սկսվեցին Սոււզայիթի, Բաքվի կոտորածները, որ ընդգրկեցին այլ հայաշատ աղբյուրանակյան տարածքներ: Ազգային-ազատագրական շարժումն սկսվեց, նաև հոգևոր կյանքը վերագործոնք արարեց: Եվ ի վերջո, 92-ի սեպտեմբերին Արցախը խորթ մորից բաժանվեց, ու անկախ հանրապետություն հռչակվեց:

Պապը հոգոց հանեց, աչքի կիզակետից անցյալը հեռացավ, և նա նկատեց, որ կրակը մարել է: Ժամանակն էր թոնրատնից լավաշները տուն տանելու: Ես օգնում էի նրանց, և սանդուղքով բարձրանալիս Չայկարամ պապի վերջին բառերն էին մտքիս թելը պարուրել. «Արցախյան շարժումն սկսվեց խորթ մորից հեռանալու և հարազատ մորը միանալու համար: Այն հասցրեց Արցախյան գոյամարտի, որտեղ համայն հայությունը ոտքի կանգնեց. ելան թե պատանի, թե հասակն առած հայորդիները, պայքարի վճռականությամբ քանդեցին վրեժի կծիկը ու ազատագրեցին հայրենի հողը»:

Ներս մտանք: Չայկարամ պապը նստեց թախտին, իսկ դիմացը հացի սեղանն էր... Ժամանակ անց լռությունը խախտվեց իր դստեր՝ Հասմիկի մատների շարժմամբ: Նրա մատները կորցրին իրենց տիրապետումը, երբ դաշնա-

մուրի ստեղծեցին ուժգնությամբ հարվածեց: Նա ելևէջներ հյուսեց, որոնք անցած պատերազմական օրերի արտացոլանքն էին: Ցավը կիզում էր ներսից, բառերով չէր կարողանում խոսել, երբ անվասայլակին էր գամվել հրետակոծությունից հետո: Սրտի խորքից բխող վերջին զարկի հետ արցունքները հոսեցին, Չայկուհի տատը մոտեցավ, սրբեց դստեր արցունքները:

Չայկարամ պապի սիրտը ցավից կծկվեց, այլևս չէր ուզում խոսել: Վեր կացավ, իջավ նկուղ, որ մեռնակ մնա և ցավը սրտում սեղմի: Ես ծածուկ քայլերով մոտեցա դռանը ու անցքից նայեցի: Փոքրիկ արվեստանոց էր: Չայկարամ պապի ձեռքերը կամաց սահում էին զոհված որդու անավարտ քանդակով:

Նորից տեսիլքի նման անցյալն է երևում ինձ... Մանկուց լսել էի, որ մայրս իմ տարիքին էր, երբ բնօրրանը թողել, հեռուներն էր գնացել: Այդժամ Արցախյան շարժումն էր, հետո պատերազմ...

Բազմերազ վիրավոր պատանիներ, նրանց ծաղկող մտքերի անկում... Հոռետեսության երանգն անհետացել, լավատեսության երանգն էր ամրացել, երբ հայ քաջորդիներն էին ձեռք մեկնել զենքին, գունդ կազմել, որ Գոյամարտուն Արցախն ազատագրեն: Հակառակորդ կանգնել էր զարտուղու առջև, երբ հայն էր անցել տունդարձի: Հաղթանակի ավետաբերով ու տարիներով ամրագրված մեծ ցնծություն էր իմ երկրում, բայց ապրիլյան այն օրը, որին սպասում էինք ծաղկի բույրով, աղավնու ճախրանքով, բացվեց թշնամու հարձակմամբ, հրետանու գործադրմամբ: Արցախի սահմանին կանգնած զինվորը վախը կորցրեց, միտքն անժամանակ պաղեց, սրտով առաջ մետվեց և իր արյան գնով ոսոխի ստեպ քայլերն արիաբար ետ մղեց: Քառօրյա պատերազմը մոր սրտի զարկի հունը փոխեց, վերստին երկյուղով լցրեց, բայց հայ զինվորն արիաբար իր գործությունը դարձյալ գործադրեց, որ մոր սրտին հանգստություն, Արցախին խաղաղություն բերի:

3.

Ես այդ օրերին դողացող ձեռքով իմ ապրած կյանքի անձայնելի պահը գրչի հարվածով հանձնեցի թղթի մի փոքրիկ կտորի: Փոքր էր այն, բայց խոսքերս այնքան մեծ էին, որ ցրտից ճաքած շուրթերս մրմնջացին, սարսափի ուժով խոսեցին բառերով, որոնք խաղաղությամբ ննջում էին մինչ այդ խավարչտին գիշերը. «Այս ապրիլյան օրը ես թևեր եմ փնտրում, որ ճախրեն, բայց մայր հողից այն կողմ չանցնեմ: Ես զենք եմ փնտրում, որ սահմանին հասնեմ, հույս եմ փնտրում, որ կարողանամ ահասարսուռ մտքերից ձեռքազատվել: Եվ առ Աստված արոթք եմ հնչեցնում, որ երկինքը ջիմջ լինի, Արցախիս սահմանը՝ պաշտպանված»:

4.

Երկու պատերազմ են տեսել, բայց երբեք հավատս չի մարել, երբևէ չեն մտածել օտարոտի դառնալու, այլուր մնալու և հողս այլոց թողնելու մասին, երբ այստեղ սահմանին կանգնած զինվորը երկյուղը վաղուց մոռացել, դիմակայել է սովորում: Հաստատական են նրա քայլերը. չէ՞ որ հաստատական է այն հողը, որ արյան գնով պաշտպանվել և մերօրյա սերունդներին է հասել: Արցախում հերոս սոսկ սահմանապահին չեն անվանում, այստեղ հերոս են նրանք, ում ունկերին դրոշմներ է հասնում, ում սիրտը թալանում և կրկին նոր զարկ է առնում, երբ թշնամու վրա արձակած գնդակը «թիրախին» է հասնում... Այստեղ հերոս են նրանք, ովքեր ամուր հավատով հավիտենական խաղաղության են սպասում: Ես էլ հերոս եմ այստեղ, սահմանամերձ Մարտակերտում եմ ապրում ու պատերազմների արահետներով եմ անցել, բայց երբ հողում անփոփված քաջորդիների քարե քանդակներին եմ նայում, ճնվում է սիրտս, ցավից կծկվում:

Լուկա ՄԱՍՈՒՆՑ ԱրՊՅ, հայոց լեզու եւ գրակ., 2-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆ

(Ռուսերենից թարգմանեց Ս. Խանյանը)

Մայրենի լեզու, Գառնի, Էջմիածին - Այն ամենը, որ ապրում է մեր մեջ, Չայաշունչ Դուրուկ, Լավաշ և ալ Նուռ, Խոտող պատմություն, լեզունդ սիրատենչ: Աղթամար, Սասուն, Գուսան, Կոմիտաս, Արագած, Մասիս ու Նոյան տապան, Հնամյա Գորիս, բերդաքաղաք Ղարս, Դեպ գալիք ձգված ուղի անխափան: Փառաբանել են պոետները քեզ, Բիտոլը ասք է դարձրել քո ոգին, Ոսկյա սինու մեջ սիրտը հրակեզ Նվիրել է քո Բրյուսով որդին: Կյանքի կանթեղը չի մարել երբեք, Միշտ բարձր ես պահել Չայկյան կուռ սինին,

Հնչել է որպես թևավոր Օրիններդ Մաշտոցյան լեզուն՝ մեր անունը հին: Թևածել ես ոնց կռունկված սոնետ, Ամեն ինչից վեր, ամեն ինչից թանկ, Չայաստան՝ դու մեր հին ու նոր շքերթ, Դու՝ մեր սուրբ օջախ, հավերժող

Էլենուրա ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱրՊՅ, ռուսաց լեզու եւ գրակ., 4-րդ կուրս

ԱՇՈՒՆ

Կորստի ցավը սիրտս է մաշում. Ինչո՞ւ դու տարար քաջերին, աշուն, Մի՞թե հերիք չեն տերևները քեզ, Բավ է՝ թող հասնեն մեր տղերքը մեզ: Ինձ հասակակից շատ տղերք չկան, Նրանց անունով փրկվում է ներկան, Ախր չեն ուզում պակասեք, տղերք, Ձեզանից հետո թողնում եք մեծ վերք, Ես էլ չեմ ուզում, որ դուք պակասեք, Ուզում եմ գաք ու «բարև, մա՛մ» ասեք, Ես էլ չեմ ուզում, որ դուք պակասեք, Ուզում եմ գաք ձեր սերերին հասնեք, Քանի՞ ժպիտներ թողեցիք հավետ, Քանի՞ երազանք մնացին անհետք, Ախր, քանի՞ տուն մնաց անորդի, Քանի՞ հայր կորցրեց աղջիկ ու որդի, Փրկիր, Տեր Աստված, փրկիր մեր ազգին, Խնորում եմ ուժ տուր տղերքի բազկին, Թշնամին խլեց հազար անմեղ կյանք Ու չխնայեց եկեղեցի, վանք, Թույլ մի տուր, Տեր իմ, պատիժն ուշանա, Թույլ մի տուր, որ իմ սերը հուշ դառնա:

Լուսինե ՍԱԻԼՅԱՆ ԱրՊՅ, անգլերեն լեզու եւ գրակ., 2-րդ կուրս

ԻՄ ՉՈՒՆ, ԻՄ ՍԵՐ

Ես եկա քեզ մոտ արցունքն աչքերիս, Խոսում եմ քեզ հետ ու անձայն լալիս, Ես մեռնակ եմ այսօր, դու չկաս կողքիս, Թախծում եմ անվերջ ես քո կորստից:

Բոլորն ինձ ասում են՝ դու հպարտ եղիր, Ձինվորիդ անունը միշտ բարձր պահիր, Նրանք լավ գիտեն մեր սիրո գինը, Իմ սե՛ր, դու էիր իմ թանկագինը:

Ցավը սպիացել է իմ սրտի խորքում, Մեկ է, միշտ դու ես իմ ցաված հոգում, Իմ տխուր դեմքին ժպիտ է գալիս, Երբ ինձ մոտ քո լույս անունն են տալիս:

Իմ առաջին սեր, իմ երազ, իմ տենչ, Ունկերիս մեջ է քո շոյող ձայնը, Կընթանա կյանքը տարիների հետ, Բայց դու իմ սրտում կապրես առիպետ:

Արմինե ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱրՊՅ, հայոց լեզու եւ գրակ., 2-րդ կուրս

<p>ՀԱՅԱՍՏԱՆ</p> <p>ԽՍՀՄԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.07.2021թ.:</p>
---	---	---	--	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: